

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1

ԴՈՑԵՆՏ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՄԻՆՏԵՏԻԿ ԿԱՌԻՉՈՒԿ

ՀՐԱՄԱԿՈՒԹՅՈՒՆ ՍԿ— „ՍՈՎՄՐԵՆԻ“ Ճ.Ս.Ս. ԲՅՈՒՐՈՅԻ

ՅԵՐԵՎԱՆ


1936

ՏԵԽՆԻՔԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 1

ԴՈՑԵՆՏ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՄԻԱՏԵՏԻԿ ԿԱՌԻՉՈՒԿ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՍԿ—„ՍՈՎՄՈՐԵՆԻ“ Ճ. Տ. Ս. ԲՅՈՒՐՈՅԻ  
ՅԵՐԵՎԱՆ


1936 թ.

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սինտեֆիկ կառչուկի, «Սովպրեն», կամ Ս. Կ. «Սովպրենը» դա արհեստական կառչուկի մի նոր տեսակն է, զորք գտնված է վերջին՝ տարիներում: «Սովպրենից» առաջ հայտնի յեն յեղել արհեստական կառչուկի ուրիշ տեսակները: Ներկայում մեր Միության մեջ արտադրվում ե լերեղեղի արհեստական կառչուկը, վորպիսին պատրաստելու համար գործ և ածվում սովորական սպիրտը: Բայց սպիրտի կառչուկի արտադրությունն ավելի զարգացնելու համար անհրաժեշտ ե գործածել հակայտական քանակությամբ սպիրտ, վորը ստացվում և գետնախնձորից: Այժմ սպիրտի կառչուկի արտադրության համար ոգտագործվում ե ժողովրդական սննդից մնացող ավելցուկը, սակայն այդ չի կարող բավարարել մեր յերկրի հարածուն պահանջը: Տարեց տարի զարգացող մեր ավտո-արդյունաբերությունը, յերկրի պաշտպանության և զարգացման անհրաժեշտությունը, զորի համար կառչուկը նույնպես կարեվոր հումույթ ե, ինչպես նավթը, ածուխը, մետաղը և այլն, արդյունաբերության առաջ դնում են կառչուկ ստանալու ազգյուրների ընդլայնման ինդիքը: Այդ տեսակետից Ս. Կ. «Սովպրենի» արտադրությունը շատ խոշոր նվաճում ե մեր արդյունաբերության համար, զորի շնորհիվ գրեթե անսպառ են դառնում կառչուկի ստանալու աղբյուրները: Կրաքարը, քարածուխը, աղը և ելեքտրական սլքը,—ահա այն բոլորը, ինչ հարկավոր ե Ս. Կ. «Սովպրեն» ստանալու համար: Այդ ամենով հարուստ և Խորհրդային Միությունը: Մնում ե միայն տիրապետել «Սովպրենը» ստանալու տեխնիկային, իսկ գրա համար մենք բոլոր հնարավորություններն ունենք:

Հարց և ծագում, ինչու յենք մենք կառուցում արհեստական կառչուկի գործարաններ, յերբ կարելի յե այդ նյութն անհրաժեշտ քանակությամբ ներմուծել արտամահմանից: Հենվել արտասահմանյան աղբյուրների վրա մենք չենք կարող, քանի զոր գա կնշանակի կախված լինել կապիտալիստների վրա մահաճույքներից, անընդհատ գտնվել կառչուկի «սավի» վտանգի տակ, մանավանդ պատերազմի ժամանակ և արտահանել վալյաժտան, այնինչ այդ վալյուտան կարելի յե գործադրել արդյունաբերության ուրիշ ճյուղերի վրա: Այսպիսով, մեր յերկրում սինտետիկ կառչուկ ստանալու ինդիքը սոցիալիստական տնտեսության համար խոշորագույն նշանակություն ունեցող ինդիք ե, զորի լուծումը մեղ հնարավորությունն կտա այս բնագա-

Ս. Կ.—«Սովպրեն»-ի ՃՏՄ Բյուրոյի հրատարակչության վարիչ ՀԲ. ԳԱՐԴԻՇՅԱՆ



11-2810198

ՔԱՆԱՔԵՐԵՒՄ ՏՊԱՐԱՆ

վառում նույնպես լինել միանգամայն անկախ կապիտալիստական յերկր-ներից:

## Ս. Կ.—„ՍՈՎՊՐԵՆ“ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

Մենք քիչ առաջ հիշեցինք, թե ինչ նյութեր են պետք սինտետիկ կառաջուկ ստանալու համար: Այժմ մի փոքր ավելի մասրամասն կանդ ուսնենք այդ խնդրի վրա:

Առաջին կարեվոր նյութը—կրաքարն ե, մի հանք, վորը գրեթե ամենու բեք տարածված ե: Սակայն սինալ կլիներ կրաքարի ամեն մի կուտակում ոգտագործել արտադրության համար, վորովհետև շատ հաճախ կրաքարին խառնված են լինում անպետք և նույնիսկ վնասակար նյութեր: Որինակի ծմբական և ֆոսֆորական թթվի մագնեզիումի աղերը: Ուստի պետք ե ընտրել կրաքարի այնպիսի աղբյուրներ, վորոնք պարունակեն կողմնակի, անպետք նյութերի նվազագույն քանակություն: Այդ աեսակետից մեր արտադրության պահանջներին միանգամայն բավարարում ե Դավալումի կրաքարը, վորը հազիվ մեկ տոկոս կողմնակի խառնուրդներ ե պարունակում, իսկ մասցած 99 տոկոսը մաքուր կալցիում կացրոնատ ե—այն, ինչ վոր հարկավոր ե կարբիդ ստանալու համար:

Յերկրորդ անհրաժեշտ նյութը՝ քարածուխն ե, վորով նույնպես շատ հարուստ ե Խորհրդային Միությունը: Այս հումքի վերաբերյալ նույնպես պետք և ասել, վոր ամեն տեսակ քարածուխ չի կարելի գործածել: Շատ հաճախ քարածուխը պարունակում ե մեծ քանակությամբ մոխիր տվող խառնուրդ կամ թոռոցիկ բաղադրիչ մասեր: Մոխիր առաջացնող խառնուրդն իջեցնում ե ստացվելիք կարբիդի վրակը, մասնավանդ, յերբ պարունակում ե ծծումբի ֆոսֆորի միացումներ, իսկ թոռոցիկ բաղադրիչ մասերը կարբիդ ստանալու պլոյեսում, վառարանի բարձր ջերմաստիճանի շնորհիվ, տարալուծվում, գազի յեն վերածվում, վորի հետևանքով հաճախ ածուխի մինչև 20—30 տոկոսը կորչում ե բոլորովին աննպատակ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, կարբիդ ստանալու համար գործ ե ածվում կոքս անտրացիտ:

Անտրացիտը բնական և շատ մաքուր ածուխ ե՝ մոխիր տվող և թռուցիկ նյութերի քանակը նրա մեջ հազիվ հասնում ե միքանի տոկոսի: Կոքսը ստացվում ե արհեստական կերպով, հատուկ վառարաններում, վորոնց մեջ, անող պայմաններում, քարածուխը շիկացնելով նախորոք տարալուծում, հեռացնում են նրա միջի թռուցիկ մասերը, (ստանալով մի շարք արժեքավոր նյութեր՝ բենզոլ, տոլու, քսիլոր, նաֆտալին և այլն): Կոքսի լավ տեսակի մեջ մոխիրը հասնում ե 9—12 տոկոսի: Քարածուխը և կոքսը ստանալու յենք Դոնեցի ավագանից:

Յերրորդ հումքը՝ սովորական աղն ե—քլոր նատրիումը: Արտադրության համար անհրաժեշտ ե, վորպեսզի սուլֆատների (ծծմբաթթու աղերի),

մագնեզիումի և կալցիումի աղերի ամենափոքր քանակություններ միայն խառնված լինեն նատրիում քլորիդի հիմնական զանգվածին: Այդ պահանջին բավարարում են Նախիջևանի հանքերը, վորտեղ մենք ունենք աղի անսպառ աղբյուր:

Կրաքարը, քարածուխը և աղը հում նյութեր են միայն, վորոնք մինչև կառչուկ դառնալը պիտի յենթարկվեն մի ամբողջ շարք քիմիական փոփոխությունների: Այդ պրոցեսներն իրագործելու համար, անհրաժեշտ ե գլիս վորապես ելեքտրական հժան եներգիա: Այդ ել ունենք՝ Զորագես, Քանաքեռգես, Սեվանի Կասկադը և ուրիշ շատ հնարավորություններ:

## ՀՈՒՄԳԻ ՄՃԱԿՈՒՄԸ

Մենք արդեն ասացինք, վոր կրաքարից, քարածուխից և աղից կառչուկ ստանալու համար, այդ նյութերը պիտի յենթարկվեն մի շարք քիմիական պրոցեսների, վորպեսզի տան Ս. Կ. «Սովորեն»-ի համար անհրաժեշտ ացետիլենն ու քլոր ջրածինը: Սցետիլեն ստանալու համար անհրաժեշտ ե կալցիում—կարբիդը կամ կրճատ կարբիդը, վորը ստացվում ե այրած կրից և քարածուխից ու կոքսից: Այրած կիր ստանալու համար կրաքարը շիկացնում են հատուկ վառարաններում, վորի շնորհիվ նա տարալուծվում ե, առաջացնելով ածխաթթու կոչված գազը: Դա այն գազն ե, վորը մենք արտաշնչում ենք թռքերից: Վառարաններում մնում ե այրած կիրը—կալցիում ոքսիդը: Դա սղիտակ կույնի մի կարծր նյութ ե, վորն ագանորեն միանում ե ջրի հետ, կամ ժողովրդական լեզվով ասած՝ կիրը «հանգչում» ե: Բայց կիրը կարող է հանգչել վոչ միայն ջրից, այլև ողում մշտապես պարունակ վող ածխաթթվից: Ուստի պետք ե խուսափել այրած կրի մեծ կուտակումից, այլ կերպ ողի խոնավության և ածխաթթվի հարատե աղղեցությունից կիրը կկորցնի իր հիմնական հատկությունները:

Կարբիդի վառարաններում ելեքտրականության միջոցով այրած կրի և ածուխի խառնուրդը յենթարկում են ուժեղ շիկացման, մինչև 2000 աստիճան: Այդ պայմաններում այրած կրի—կալցիում ոքսիդի մեջ յեղած կալցիում-մետաղը և թթվածինն առանձին-առանձին միանում են շիկացած ածխի հետ, տալով մի կողմից կարբիդ, մյուս կողմից ուգարի գազը: Այդ քոլորը մենք կարող ենք պատկերացնել, գիտելով ստորեվ բերված նկարը:

վառում նույնպես լինել միանգամայն անկախ կապիտալիստական յերկր-ներեց:

## Ս. Կ.—„ՍՈՎՊՐԵՆ“ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

Մենք քիչ առաջ հիշեցինք, թե ինչ նյութեր են պետք սինտետիկ կառուղուկ ստանալու համար: Այժմ մի փոքր ավելի մանրամասն կանգ տանենք այդ խնդրի վրա:

Առաջին կարեվոր նյութը—կրաքարն ե, մի հանք, վորը գրեթե ամենուրեք տարածված ե: Սակայն սիսալ կլիներ կրաքարի ամեն մի կուտակում ոգտագործել արտադրության համար, վորովհետև շատ հաճախ կրաքարին խառնված են լինում անպետք և նույնիսկ վնասակար նյութեր: Որինակ ծծմբական և ֆոսֆորական թթվի մագնեզիումի աղերը: Ուստի պետք և ընտրել կրաքարի այնպիսի աղբյուրներ, վորոնք պարունակեն կողմնակի, անպետք նյութերի նվազագույն քանակություն: Այդ անսակետից մեր արտադրության պահանջներին միանգամայն բավարարում ե Դավալումի կրաքարը, վորը հաղիվ մեկ տոկոս կողմնակի խառնուրդներ և պարունակում, իսկ մասցած 99 տոկոսը մաքուր կալցիում կարեռնատ ե—այն, ինչ վոր հարկավոր ե կարենդ ստանալու համար:

Ցերկորդ անհրաժեշտ նյութը՝ քարածուխն ե, վորով նույնպես շատ հարուստ ե Խորհրդային Միությունը: Այս հումքի վերաբերյալ նույնպես պետք և ասել, վոր ամեն տեսակ քարածուխ չի կարելի գործածել: Շատ հաճախ քարածուխը պարունակում ե մեծ քանակությամբ մոխիր տվող խառնուրդ կամ թոռոցիկ բաղադրիչ մասեր: Մոխիր առաջացնող խառնուրդն ե ստացվելիք կարբիդի վորակը, մանավանդ, յերբ պարունակում ե ծծումբի ֆոսֆորի միացումներ, իսկ թոռոցիկ բաղադրիչ մասերը կարբիդ ստանալու պրոցեսում, վառարանի բարձր ջերմաստիճանի շնորհիվ, տարալուծվում, զաղի յեն վերածվում, վորի հետեւանքով հաճախ ածուխի մինչև 20—30 տոկոսը կորչում ե բոլորովին աննպատակ: Հաշվի առնելով այդ հանգամանքը, կարբիդ ստանալու համար գործ ե ածվում կոքս անտրացիտ:

Անտրացիտը բնական և շատ մաքուր ածուխ ե՝ մոխիր տվող և թոռոցիկ նյութերի քանակը նրա մեջ հաղիվ հասնում ե միքանի տոկոսի: Կոքսը ստացվում և արհեստական կերպով, հատուկ վառարաններում, վորոնց մեջ, անող պայմաններում, քարածուխը շիկացնելով նախորոք տարալուծում, հեռացնում են նրա միջի թոռոցիկ մասերը, (ստանալով մի շարք արժեքավոր նյութեր՝ բնագով, տոլուս, քսիլոր, նաֆտալին և այլն): Կոքսի լավ տեսակի մեջ մոխիրը հասնում է 9—12 տոկոսի: Քարածուխը և կոքսը ստանալու յենք թոնեցի ավագանից:

Ցերբորդ հումքը՝ սովորական աղն ե—քլոր նատրիումը: Արտադրության համար անհրաժեշտ ե, վորպեսզի սուլֆատների (ծծմբաթթու աղերի),

մագնեզիումի և կալցիումի աղերի ամենափոքր քանակություններ միայն խառնված լինեն նատրիում քլորիդի հիմնական զանգվածին: Այդ պահան-ջին բավարարում են Նախիջևանի հանքերը, վորտեղ մենք ունենք աղի անսպառ աղբյուր:

Կրաքարը, քարածուխը և աղը հումք նյութեր են միայն, վորոնք մինչև կառուցուկ դառնալը պիտի յենթարկվեն մի ամբողջ շարք քիմիական փոփոխությունների: Այդ պրոցեսներն իրագործելու համար, անհրաժեշտ ե գլուխ վորապես ելեքտրական եժան եներգիա: Այդ ել ունենք՝ Զորագես, Քանաքեռգես, Սեվանի Կասկաղը և ուրիշ շատ հնաբավորություններ:

## ՀՈՒՄՔԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Մենք արդեն սասցինք, վոր կրաքարից, քարածուխից և աղից կառուցուկ ստանալու համար, այդ նյութերը պիտի յենթարկվեն մի շարք քիմիական պրոցեսների, վորպեսզի տան Ս. Կ. «Սովորեն»-ի համար անհրաժեշտ ացետիլենն ու քլոր ջրածինը: Սցետիլեն ստանալու համար անհրաժեշտ ե կալցիում—կարբիդը կամ կրծատ կարբիդը, վորը ստացվում ե այրած կրից և քարածուխից ու կոքսից: Այրած կիր ստանալու համար կրաքարը շիկացնում են հատուկ վառարաններում, վորի շնորհիվ նա տարալուծվում ե, առաջացնելով ածխաթթու կոչված գազը: Դա այն գազն ե, վորը մենք արտաշնչում ենք թթվերից: Վառարաններում մնում ե այրած կիրը—կալցիում ոքսիդը: Դա ստիտակ գույնի մի կարծը նյութ ե, վորն ազահորեն միանում ե ջրի հետ, կամ ժողովրդական լեզվով ասած՝ կիրը «հանգչում» ե: Բայց կիրը կարող է «հանգչել» վոչ սիայն ջրից, այլև ոդում մշտապես պարունակ վող ածխաթթվից: Ուստի պետք ե խուսափել այրած կրի մեծ կուտակումից, այլ կերպ ողի խոնավության և ածխաթթվի հարատե ազդեցությունից կիրը կկորցնի իր հիմնական հատկությունները:

Կարբիդի վառարաններում ելեքտրականության միջոցով այրած կրի և ածուխի խառնուրդը յենթարկում են ուժեղ շիկացման, մինչև 2000 ստախան: Այդ պայմաններում այրած կրի—կալցիում ոքսիդի մեջ յեղած կալցիում-մետաղը և թթվածինն առանձին-առանձին միանում են շիկացած ածխի հետ, տալով մի կողմից կարբիդ, մյուս կողմից ուգարի գազը: Այդ քոլուրը մենք կարող ենք պատկերացնել, դիտելով ստորեվ բերված նկարը:

կալցիում	թթվածին
----------	---------

Այրած զիք

ԱՅուի.	ԱՅուի
--------	-------



ԱՅուի  
(շիկացած)

կալցիում	ԱՅուի
----------	-------

թթվածին	ԱՅուի
---------	-------

յարբիդ

ուժարի գակ

Գծագիր № 1

Պատրաստի կարբիդը հալած վիճակում դատարկում են վառարանից և սառեցնում: Կարբիդի լավ կամ վատ լինելը վօրոշում են նրանով, թե քանի լիտը ացետիլեն և ստացվում մեկ կիլոգրամ կարբիդից՝ վորոշում են կարբիդի լիտրաժը: Յեթե կարբիդը վոչ մի խառնուրդ չպարունակեր, այսինքն բաղկացած լիներ միայն ածխածնի և կալցիումի միացումից, այն ժամանակ 1 կիլոգրամ նյութից կտացվեր մոտ 350 լիտր ացետիլեն: Սակայն տեխնիկական կարբիդը տալիս ե ավելի պակաս՝ 280—310 լիտր: Ուրիշ կերպ չեր ել կարող լինել, քանի վոր կարբիդ ստանալու համար գործածվող ածուխն իր մեջ մօխիք և պարունակում ու այդ մօխիք մասերը ստացման պրոցեսում խառնվում են կարբիդին: Յերկրորդ՝ վորքան ել լավ կատարել պրոցեսը, միշտ միենույն քանակի ածուխ կամ այրած կեր չի մտնում ուսակցիայի մեջ, և անփոփոխ մնալով հալված կարբիդի մեջ, կորչում ե ապարդյուն: Շնորհիվ դրա, տեխնիքական կարբիդը 100 տոկոսային չի և հետևաբար նրանից չի յել կարելի 100 տոկոսով ացետիլեն ստանալ:

Յերկրորդ նյութը, վորն անհրաժեշտ ե U. կ. «Սովորեն» ստանալու համար, աղաթթուն և քլորջրածինը: Այդ պրոցեսին մենք կծանոթանանք այն չափով, ինչ չափով վոր այդ պետք ե, մեր հիմնական ինդրի պարզաբանման ամբողջականությունը պահպանելու համար:

Աղաթթվի ստացումն սկսվում է աղի քլոր նատրիումի ելեքտրոլիդով:

ԲԼՈՐ	ՆԱՎՐ
------	------

ՄԵՂԱՆՔ աղ

Գծագիր № 2

Քլորն ունի բացասական լիցք, իսկ նատրը՝ դրական: Ցերբ ջրի մեջ լուծված քլոր նատրի միջով ելեքտրական հոսանք ենք անցկացնում, քլորն անջատվում և նատրիումից, և դուրս ե գալիս գաղային վիճակում: Նատրիում մետաղն անջատվելով քլորից, իսկույն աղիում և աղի լուծույթում յեղած ջրի վրա և տալիս ե կծու նատրիուն և ջրածին: Այդ պրոցեսը մենք կարող ենք պատկերացնել հետևյալ կերպ՝

ջրամի	թթվածին	ջրամի
-------	---------	-------

ջուր

ՆԱՎՐ
------

նավր

ջնա նավր հաղաց
----------------

ջրամի
-------

ջամի

Գծագիր № 3

Ուրեմն, աղի ելեքտրոլիզից մենք ստանում ենք 3 նյութ՝ նատրիուն, մի չափ կարեւոր նյութ, վորը սակայն U. կ. «Սովորեն» ստանալու համար վոչ մի նշանակություն չունի, և հետո քլոր ու ջրածին, վորոնք անհրաժեշտ են, վորովհետև այդ նյութերը, միացվելով, համարկ վառարաններում, տալիս են քլորջրածին: Պարզ լինելու համար դիտենք ստորև բերված նկարը

ԲԼՈՐ
------

+

ջրամի
-------

ԲԼՈՐ	ջրամի
------	-------

ԲԼՈՐ

ՋՐԱՄԻ

ԲԼՈՐ ՋՐԱՄԻ


Գծագիր № 4

Քլոր ջրածինն անգույն դագ ե, վորը մեծ քանակությամբ լուծվում է ջրի մեջ:  $37^{\circ}$  ջամին քլորջրածնի լուծույթը հայտնի յի «միացող աղաթթու» անգան տակ: Քլորջրածնի հետ պիտի զգույշ լինել, քանի վոր նա վարոշակով թունավոր ե:

Այժմ, յերբ մենք ծանոթացնենք U. կ. «Սովորեն» ստանալու հիմնական նյութերին՝ կարբիդին և աղաթթվին, անցնենք մեր ըուն նյութին, թե ինչ քիմիական պրոցեսներ պետք ե կատարել, կառչություն ստանալու համար:

## ԱՅԵՏԻԼԵՆԻ ՍՏԱՑՈՒԾ

Կարբիդի վրա ջուր լցնելուց նա քայլայվում է, վերածվելով հանգած կրի և ացետիլենի:



Գծագիր № 4 ա

Այդ ռեակցիան կատարվում է բուռն կերպով, մեծ քանակությամբ ջերմություն և արտադրվում, և յեթե հաշվի չառնվեն մի շարք ուրիշ պայմաններ, պրոցեսը կարող է վտանգավոր դառնալ իսկ ստացված ացետիլենը վատարակ: Յերբ քիչ քանակությամբ ջուրը լցնում են մեծաքանակ կարբիդի վրա, ուսակցիայի շնորհիվ ստացվող ջերմությունն այնքան մեծ է լինում, վոր կարբիդը կարող է շիկանալ և ստացվող ացետիլենը պայթնի: Ուստի, գործարանային չափերով ացետիլեն ստանալու համար չի կարելի կիրառել ջուրը կարբիդի վրա լցնելու սկզբունքը: Այդ սկզբունքի մի այլ թերությունն ել այն է, վոր ջերմության աղեցության տակ ացետիլենը քիմիական փոփոխությունների յենթարկվում:

Այդ անհարմարություններից և դժվարություններից խուսափելու նպատակով, մեծ քանակությամբ ացետիլեն ստանալու համար, կիրառվում է կարբիդը ջրի մեջ ձգելու սկզբունքը, վորն ունի մի շարք առավելություններ և գորոնցից գլխավորն են՝


1. Յերբ համեմատարար փոքրաքանակ կարբիդը գցվում է մեծ քանակությամբ ջրի մեջ, ուսակցիայի հետևանքով գոյացած ջերմությունը ջրի կողմից կլանվում է, ջերմաստիճանը ջրի յեռման կետից (100 աստիճան) յերբեք չի կարող անցնել: Սովորաբար ջերմացումը 30—35 աստիճանից ավելի չի լինում:

2. Շնորհիվ ռեակցիայի ջերմային մեղմ պայմաններին, ացետիլենը չի քայլայվում կամ քիմիական ուրիշ փոփոխությունների չի յենթարկվում:

3. Հենց ստանալու պրոցեսում ացետիլենը մասամբ մաքրվում է կողմանի գազերից՝ ավշակեց, ծծմբաջրածնից, վորոնք լուծվելով ջրի մեջ մնում են ացետիլեն ստանալու ապարատների—գեներատորների մեջ:


Այստեղից պարզ է, թե ինչու ացետիլենի գործարան կառուցելիս նկատի պետք է առնել «կարբիդը ջրի մեջ» սկզբունքը: Կարբիդի և ջրի հարաբերությունը պիտի լինի՝ 1 կիլոգրամ կարբիդին 6 լիտր ջրից վոչ պահան:

Կարբիդի լիտրաժը վորոշելու համար վարվում են հետևյալ կերպ: Կոլբայի մեջ լցնում են վորով քանակությամբ, կշռով, կարբիդ, ապա խցանում են կոլբան 2 անգամ ունեցող խցանով: Անցքերից մեկի միջնորդ են կացնում ձագար, վորով կոլբայի մեջ ջուր են լցնում: Կարբիդը տարալուծվում է և գոյացած ացետիլենը խողովակով անցնում է նախորդոք ջրով լցված չափածո անոթի մեջ: Ացետիլենը դուրս է մղում ջուրը խողովակով: Դուրս յեկած ջրի քանակով վորոշվում է տվյալ քանակությամբ կարբիդից ստացվող ացետիլենի քանակը:



Գծագիր № 5

Այսաեղ մենք տալիս ենք ացետիլեն ստանալու սարքավորման (գեներատորի) ռերվագիծը:




Գծադիր № 6

Գեներատորը գլանաձև մի անոթ է, վերն ունի ծնկաձև խողովակ «7» կարբիդ ձգելու համար, «1» անցքը գեներատորը մաքրելու և «3» խողովակի ացետիլենը դուրս տանելու համար: «2» զանգը մտնում է նկարի վարպ յերեացող միջապատճան «4», «4» տարածության մեջ—վորանեղ ջուրը ելցված: Ջրով լցված և նաև գեներատորը մինչև նկարի վրա ցույց տված մակարդակը: Յեթք կարբենը ձգում է «7» անցքից, նույնցնելով ջրի մի փոքր սյունի միջով, լցվում է գեներատորի մեջ: Ստացվող ացետիլենի բարձրանալով կուտակվում են «2» զանգի տակ ու բարձրացած պատճանակները:

Եյս ժամանակ «3» խողովակի ծայրը դուրս կգա ջրի միջից, մակարդակից վերեվ և ավելցուկ ացետիլենը «3» անցքով յեր գտնելով, այլև դուրս չի շպրտի զանգի միջնապատռմ գտնվող ջուրը, ապահովելով այդպիսով ապարատի կանոնավոր աշխատանքը:

Մեր նկարագրած ապարատը միևնույն ժամանակ ծառայում է նաև կարբիդից ացետիլեն ստանալու և ստացված ացետիլենը կուտակելու համար: Ացետիլենի խողով գործարաններում, վորանեղ տոններով կարբիդ տարալուծելով հազարավոր խորանարդ մետր ացետիլեն են ստանում, սարքավորումը կտորուցվում և այնպես, վոր կարբիդը տարալուծվում և առանձին ապարատների մեջ, իսկ ստացված ացետիլենը խողովակների միջով տարվում և հատկապես սարքված համապատասխան չափի գազողողերը, վորն իր մեջ և կուտակում մի քանի գեներատորներից ստացվող ացետիլենը:



Գծադիր № 6 ա


Կարբիդից ստացված ացետիլենը, հում ացետիլենը, անմիջապես գործածել չի կարելի, վորովհետև տեխնիքական կարբիդը մաքուր չկինելու պատճառով, ացետիլենին խառնված են լինում ոտար և նույնիսկ վտանգավոր գազեր, վտանգավոր վոչ միայն այն իմաստով, վոր նրանք թունավոր որպանիզմի համար, այլ և շնորհիվ նրանց ինքնին բռնկվող հատկությունների: Այդ անցանկարի խառնուրդներն են ֆոսֆորացրածինը, սիլիցիջրածինը, ծծմբաջրածինը: Վերջինս վնասակար և մի այլ պատճառով ևս, նաև շնորհած միանալով դիվինիլացետիլեն ստանալու համար գործածվող կատալիզատորի միջի պղնձի հետ, տալիս և անլուծելի նստվածքներ, վորոնք կարող են խանգարել պրոցեսը: Պարզ եւ ուրեմն, վոր անհրաժեշտ

նախ և առաջ ազատվել այդ անպետք, վկասակար խառնուրդներից։ Բարեբախտաբար այդ բոլոր նյութերը հեշտությամբ քայլքայլում են և դժուված են մի շարք միջոցներ, ացետիլենն այդ կողմանի խառնուրդներից մաքրելու համար։ Մենք այստեղ կհիշենք դրանցից մեջն մեկը—հելոպոլը։

Հելոպոլը պատրաստում են 30 մաս խրոմպիկից, 30 մաս ջրից և 10 մաս խիտ ծծմբական թթվից։ Ստացվում ե մուգ նարնջագույն լուծվածք, փորին ավելացնում են այնքան ինֆուզորի հող, վոր լուծվածքը նրա մեջ ծծվելուց հետո, ստացվի նույնպես նարնջագույն խոնավ փոշի, վորից հետո հերոդոլը արդեն պատրաստ ե գործածության համար։ Ացետիլենը մաքրելու համար հերոդոլը տեղավորում են հատուկ դտիչի մեջ, վորի ուրվագիծը մենք այստեղ տալիս ենք։

Այդ դտիչը մի շերկաթյան գլան ե, վորի մեջ զետեղված են 2, 2, 2 մաղանման դարակները։ Վերջիններիս վրա լցնում են համապատասխան հաստությամբ հերոդոլի շերտ 3, 3, 3։ Ացետիլենը մտնելով ստորին անցքից, 4, 4, հաջորդաբար անցնում ե վարից վեր բոլոր դարակների վրա գտն վոր հերոդոլի շերտերի միջով և դուրս ե գալիս վերին անցքից 5, արդեն մաքրված, շնորհիվ այն բանի, վոր նրան խառնված գազերը, հերոդոլի շերտերի միջով անցնելիս, քայլքայլում, ոքսիզ նում են։ Ժամանակ առ ժամանակ անհրաժեշտ ե հերոդոլը նույնպել, վորովհետև կարրիքը զտելու հետեւ վարի նարնջի գույնից փոխվում ե կանաչ գույնի։

Նկարագրած ձեզով մաքրված ացետիլենն արդեն պատրաստ ե գործածության համար։



Գծագիր № 7

## ԱՑԵՏԻԼԵՆԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ացետիլենի հետ գործ ունեցողը պետք ե լավ ծանոթ լինի նրա հատկություններին։ Խնդիրը նրանում չե միայն, վոր ացետիլենը հեշտությամբ այրվող գազ ե, ինչպես և շատ ուրիշ գազեր ու նյութեր։ Յեթե միայն այդ լիներ, բոլորին լավ հայտնի դյուրավառ նյութերի հետ վարվելու ձեզը կրպվեր և հապուկ ուշադրության կարիք չեր զգացվի։ Բայց ացետիլենն ուշ-

նի իր առանձնատկությունները, իր «քմահաճույքները», վորոնց կողքով անուշադիքի անցնելն աղետավի հետեւլանքներ կարող ե ուժենալ։ Ուստի մենք մի փոքր ավելի մանրամասն կանգ կառնենք ացետիլենի հատկությունների վրա։

Ացետիլենը ուժեղ ճնշման չի կարելի յինթարկել։ Յեթե ճնշումն անցնել մեկ և կես մթնոլորդից, նա կարող ե պայմեն մեծ քանակությամբ ջերմություն տուաջացնելով, և տարալուծվելով իր բաղադրիչ մասերի հետ, կատածածին և ջրածին։ Պայմենը ժերմությունը կարող ե հաս նել 3000 աստիճանի, այսինքն գազերն ընդարձակվելով կառաջացնեն այնպիսի ճնշում, վորից սովորական շոգեկաթսաների դիմադրությունը ունեցող անոթները կպայմանական կամաց անոթների մեջ արգայիշեն։ Պարզ ե, վոր պայմանական ուժն ել ավելի կաստիկանա, յեթե ացետիլենի վրա գործադրված նախական ճնշումը մեկ ու կես մթնությունից ավելի լինի։ Հետևաբար, սովորական ճնշումը, վորի տակ արտադրության պայմաններում ացետիլենը կարելի յե մղել խողովակների և ապարատների միջով, մեկ մթնությունից չպիտի անցնի։ Առաջներում, ացետիլենի այդ հատկությանը ծանոթ չկենանքով, մարդկային շատ զոհեր են յեղել։

Յերկրորդ վտանգը, վորն արտադրության մեջ մեծ աղետի պատճառ կարող ե լինել, ացետիլենին ոդ խառնվելն ե։ Մինչդեռ սովորական այրվող գազերի մեծամասնությունը պայմանական իրանուրդ են տալիս միայն 25—35 տոկոս ոդ պարունակելուց հետո, ացետիլենին բավական ե ոդի 10 տոկոս և նրա մի մասը միայն, խառնված ոդի թթվածնի հետ, այրվելով, կպայմանական գազի նաշացած մասը, ճնշումը կրարձրանա մեկ ու կես մթնությունից և տեղի կունենա ացետիլենի ինքնին պայմանը։

Նույնպես շատ վտանգավոր ե ացետիլենի պղնձի կամ նրա աղերի վրա ունեցած աղդեցությունը չոր պայմաններում։ Այդ գեղքում ստացվում են միացումներ, վորոնք ամենափոքր շփումից անգամ, իսկ յերբեմն առանց վորեւ նկատելի առիթի, ուժգնորեն պայմանական են, կայծեր առաջացնելով։ 62 տոկոս պղնձից, 35,5 տոկոս ցինկից, 0,9 տոկոս արծիճից և 0,75 տոկոս անագից բաղկացած ձուլվածքի վրա։ Ացետիլենը չի աղդում, նույնպես չի աղդում նաև յերկաթի ու չուգունի վրա։ Այս հանգամանքը պետք է նկատի ունենալ ացետիլենի սարքավորում պատրաստելու ժամանակ։ Ացետիլենի մյուս հատկություններից պետք ե նշել նրա լուծվելու ընդունակությունը ջրի մեջ, վորը սովորական ջերմաստիճանի ժամանակ կարելի յե ընդունել 1: 1 (մեկ ծավալ ջրին մեկ լիտր ացետիլեն) և նրա սառչելը —80°-ի ժամանակ, առանց նշեղուկ վիճակի վերածվելու։

## ԱՑԵՏԻԼԵՆԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐԳԱՆԻԶՄԻ ՎՐԱ

Ացետիլենի հետ գործ ունեցողները չպիտի ե մոռանան, վոր անուշադրության գեղքում նրանք կարող են թունավորվել։ Տեսնենք, թե ինչն պետք ե վերագրել ացետիլենի մարդու որդանիզմի վրա ունեցող վնասակար աղդեցությունը։

Ինչպես նշեցինք, տեխնիքական կարբիդից ստացվող ացետիլենը մա-


քուր չե: Նա իր մեջ պարունակում ե այնպիսի թունավոր գազեր, ինչպիսիք են ֆոսֆորաջրածինն ու ծծմբաջրածինը: Հետևաբար, պետք ե խոռափակել ացետիլենի մթնոլորդում մնալուց և լավ ողափոխություն պիտի կատարել բոլոր այն տեղերում, վորտեղ ացետիլեն կարող ե կուտակվել: Ացետիլենի մեջ յեղած գազային խառնուրդներն այրվելուց հետո ևս, շարունակում են թունավորել որդանսիզմը, վորովիճետ այրման պրոցեսում այդ խառնուրդներից ստացված նյութերն իրենց հերթին թունավորում են շնչառության գործարանները: Ինչ վերաբերում ե մաքուր ացետիլենին, նա այնքան ել վտանգավոր չե և միայն մեծ քանակությամբ ներշնչվելու դեպքում թմրեցնող, քննեցուցիչ աղղեցություն ե գործում: Ացետիլենի այդ հատկությունն ուստագործում են վերաբույժները, քննեցնելով վերահատության յենթակա հիվանդներին: Արտադրության մեջ գործածվող ացետիլենը յերբեք մաքուր չի լինում և միշտ պետք ե զգուշանալ նկատելի քանակությամբ ացետիլեն պարունակող ողով շնչելուց:

Այժմ անցնենք մեր ըուն նյութին—ացետիլենից «սովորեն» ստանալու յեղանակին, առանձին ուշադրություն դարձնելով այդ հարցի քիմիական կողմի վրա:

## ՄՈՆՈՎԻՆԻԼ ՅԵՎ ԴԻՎԻՆԻԼԱՑԵՏԻԼԵՆԻ ՍՏԱՑՈՒՄԸ

Մոնովինիլացետիլեն «մվա» և դիվինիլացետիլեն «դվա» ստանալով և ակսվում քիմիական պրոցեսների այն շարքը, վորոնց շնորհիվ ացետիլենը վեր և ածվում կառուչումի:

Ացետիլենը, մվա-ն և դվա-ն, իրար շատ նման նյութեր են և ստացվում են մեկը մյուսից: Պարզ լինելու համար դիտեք բերված նկարը:



Գծագիր № 8

Ացետիլենի 2 մասնիկներ իրար քիմիապես միանալով, տալիս են մոնովինիլացետիլեն—մվա: Յեթե մեկ մասնիկ մվա-ին կցվի մեկ մասնիկ ացետիլեն, կստացվի դիվինիլացետիլեն:



Գծագիր № 9

Այլ կերպ ասած, մվա-ն ացետիլենի կրկնապատիկն ե, իսկ դվա-ն ացետիլենի յեռապատիկը: Յերբ այդ քիմիական պրոցեսը տեղի յե ունենում, ասում են, վոր ացետիլենը պոլիմերանում ե, մվա-ն և դվա-ն ացետիլենի պոլիմերներն են:

Սակայն այդ պոլիմերացումը, վորի հետևանքով ստացվաւմ ե մվա և դվա, ամեն պարագայում տեղի ունենալ չի կարող: Դրա համար անհրաժեշտ ե հատուկ քիմիական ազդեցություն գործել: Վերջին տարիների ընթացքում այդ նպատակի համար գործ ե ածվում հատուկ կատալիզատոր:


Կատալիզատոր ասելով, քիմիկոսները հասկանում են այնպիսի նյութեր, վորոնց ներկայության ժամանակ տեղի յե ունենում վորեւ քիմիական ռեակցիա: Կատալիզատորն ինքը վոչ մի քիմիական փոփոխության չի յենթարկվում: Բնը նը մի շատ պարզ որինակ՝ փորձեցեք լուցկով վառել շաքարի մի կտոր: Այնտեղ ուր դուք կմոտեցնեք լուցկին, շաքարը կհալվի, կսեղանա, բայց բոցավառվել չի կարող: Սակայն բավական և շաքարի վրա մի փոքր ծխախոտի մոխիր լցնել (շնորհիվ իր հատկությունների, ծխախոտի մոխիրը կատալիզատորի գեր խաղում) և ապա մոտեցնել լուցկին, և շաքարը կսկսի վառվել անմուխ կապույտ բոցով: Հայտնի յե, վոր մոխիրն ինքն այրվել չի կարող, սակայն իր ներկայությամբ աշակցում ե ռեակցիային, տպյալ գեղագում շաքարի այրվելուն: Այստեղից չպիտի սխալ յեղանակություն անել, վոր կատալիզատորներ միշտ անհրաժեշտ են:

Ացետիլենից մվա և դվա ստանալու համար գործադրվող կատալիզատորը մի խառնուրդ ե, վորը պարունակում ե կիսաքլոր պղինձ, ամմոնիում քլորիդ (նաշագիր), աղաթթու և ջուր: Որինակ, ամերիկացիները առաջին անգամ տվել են կատալիզատորի հետեւյալ բաղադրությունը՝

1. Կիսաքլոր պղինձ 1000 մաս
2. Ամմոնիում քլորիդ 390 մաս
3. Աղաթթու . . . 25 մաս
4. Ջուր . . . . 450 մաս

Յեթե այդ խառնուրդը լցնենք կոլբայի (ապակյա անոթի) մեջ և ապա հետո ացետիլեն խառնենք, կտեսնենք, վոր վերջինս արագորեն կլանվի: Ապա յեթե կոլբան տաքացնենք ու սառեցնելուց հետո հավաքենք կոլբայից դուրս յեկող գազերը, սառեցրած ամանի մեջ կկուտակվի մվա և դվա պառանակող մի հեղուկ: Սակայն այս յեղանակով խոշոր չափերով մվա և դվա ստանալը հնարավոր չե: Կարիք կլինի անոթների մեջ հաջորդաբար կատալիզատորը նախ հագեցնել ացետիլենով, հետո դադարեցնել ացետիլենի հոսանքը և գոյացած մվա-ն դուրս հանել ջրի գոլոշիների ոգնությամբ: Պրոցեսը կլինի ընդհանուր և բացի այդ, ամեն անգամ կարիք կդադարացվի պատրաստել նոր կատալիզիկ խառնուրդը: Այդ ձևով աշխատելու գեպքում այնքան մեծ չափով կատալիզատոր կգործածվեր և այնքան թանկ կնստեր արտադրությունը, վոր վոչ մի միտք չեր ունենա սովորենա-ի գործարան կառուցելը:

Բայց խորհրդային մի շաբաթ քիմիկոսների աշխատանքի շնորհիվ, մվա և դվա ստանալու պրոցեսը հիմնովին կատալիզադորմել և ձևափոխվել ե:




Գծագիր № 10

Ռեակտորի մեջ լցնում են կատալիզատոր, վորի միջով մղում են ացետիլենը, հասուլկ մղիչի ոգնությամբ: Ացետիլենն անցնելով կատալիզատորի շերտի միջով, մասամբ պոլիմերանում ե, տալով մվա և դվա, վորոնք խառնվելով փոփոխված ացետիլենին և մասամբ ջրի գոլորշներին, դուրս են ապրվում ռեակտորից: Հասնելով կոնդենսատորին, գազերի խառնուրդը սառչում ե, ջրի գոլորշների մեծ մասը խտանալով կրկին ջրի յեւ վերածվում և կուտակվում կոնդենսատորի մեջ: Գոլորշների հետ մեկտեղ հեղուկանում և կուտակվում են նաև ացետիլենի բարձր պոլիմերները, իսկ մոնո և դիվինիլացետիլենը ջրի գոլորշների մացորդի հետ միասին անցնում են սկրուբերի մեջ, վորտեղ լվացվում են մինչև—20 աստիճան սառեցրած քլոր կալցիումի լուծույթով: Այստեղ ամբողջապես կլանվում են ջրի գոլորշները և դիվինիլացետիլենի մեծ մասը: Ջրի գոլորշներից ազատվելով այստեղ հրամայողական անհրաժեշտություն ե, քանի վոր խոնավության փոքր հետքեր անգամ մալով ացետիլենի և մվա-ի խառնուրդում և անցնելով ապա մվա-ն իրենց մեջ պահող սկրուբերների մեջ, վորտեղ ցուրտը հասնում և —30-ի, կուտակվելով կսառչեն և կփակեն սկրուբերի անցքը: Ուրեմն պետք ե հիշել, վոր քլորկալցիումի—20 աստիճան սառեցրած լուծույթով վոռոգվող սկրուբերում լրիվ անջատվելու յեն ջրի գոլորշները և դիվինիլացետիլենի մեծ մասը: Այս սկրուբերից դուրս յեկող գազային խառնուրդը պարունակում ե հիմա մեծ քանակությամբ ացետիլեն, գրեթե ամբողջ մվա-ն, դիվինիլացետիլենի հետքեր միայն, և բոլորովին ազատ և ջրի գոլորշներից: Գազերը, շարունակելով իրենց ճանապարհը, անցնում են հաջորդաբար մվա կլանող 3 կամ ավելի թվով սկրուբերների միջով: Գազերը մտնում են 1-ին սկրուբերի ստորին մասից, բարձրանում են վեր, հասնելով սկրուբերի վերին մասին, նրանք հոսում են 1-ին սկրուբերի վերևում գտնվող անցքը 2-րդ սկրուբերի ստորին մասում գտնվող անցքին միացնող խողովակով, և այդպես շրջագայում բոլոր սկրուբերների միջով: Սկրուբերներից ամեն մնկի վերեկում դրված ե լուծույթով լցված մի անոթ, իսկ տակում մի ընդունարան: Սկրուբերները լցված են Ռաշիդի ողակներով: Վերի անոթները և տակի ընդունարանները տեղափորված են հատուկ շապիկի մեջ և սառեցվում են—30 աստիճան սառեցրած քլոր կալցիումի լուծույթով: Սառնությունը պահպանելու նպատակով, շապիկները և սկրուբերները փաթաթված են ջերմություն չհաղորդող շերտով:

Սկրուբերն աշխատում ե հետեւյալ սկրունքով: Կերին անոթից սառը լուծիչը ծծվում ե սկրուբերի մեջ և հոսելով Ռաշիդի ողակների վրայով իջնում ե ցած, կուտակվելով ապա սկրուբերի տակ գտնվող ընդունարանում: Մվա պարունակող գազերը, շարժվելով լուծիչի հոսանքին հակառակ, վարից վեր, շնորհիվ Ռաշիդի ողակների, սերտորեն շփվում են սառը լուծիչի հետ, վորի հետեւանքով մվա-ն լուծվում ե լուծիչում և վերջնիս հետ մնկտեղ, կուտակվում ստորին ընդունարանում: Ացետիլենը շարունակում ե իր ճանապարհը, մտնելով 2-րդ և 3-րդ սկրուբերների մեջ, վորտեղ կլանվում են առաջին սկրուբերում չկլանված մվա-յի մացորդները: Բոլոր պարուբբեր-

11-28.09.97

Ներով անցնելուց հետո, ացետիլենը դուրս է գալիս և այժմ նրան կարելի յի կրկին ոգտագործել, ոետև կառու միջով ացետիլեն մղող մղիչի ոգնությամբ։ Այդպիսով ստացվում է ֆակ շղթա և հնարավոր է դառնում ոետակա յի անգամ մասնակցող ացետիլենը կրկին անգամ ոգտագործել, միենույն ժամանակ պրոցեսը դառնում է անընդհատ։



Գծագիր № 11

Նյուրերի շարժումը ացետիլենի պոլիմերացման ժամանակ

Արտադրության համար անհրաժեշտ սառնությունն ստացվելու յի համապնդ սառեցման ցեխում, վորտեղ աշխատելու յին ցուրտ արտադրող մեքենաները նրա մանրամասն նկարագրությունը այս զբույցի սահմաններից դուրս են։

Մենք տեսանք, թե գազային խառնուրդը, դուրս գալով ոետակորներից, ինչպիսի հետեւղականությամբ և հոգատարությամբ սառեցվում են։ Ցեղ դա անհրաժեշտ է, վորովհետև միր արտադրության համար կարեվորագույն մոնովինիլացետիլենը մի հեղուկ է, վոր յեռում ե+5 աստիճանի ժամանակ։ Այդպիսի ցածր աստիճանի ժամանակ յեռացող նյութերը շատ դժվար ե հեղուկացները։ Բայց յերբ նրանք շփվում են սառեցրած լուծիչների հետ, հեղուությամբ լուծվում են վերջիններիս մեջ և այդպիսով պահպականացները,

Այժմ տեսնենք, թե ինչպես պետք է կատարել այս աշխատանքները, լավ արդյունք ստանալու համար։

Ոետակորների բաժնի հաջող աշխատելու առաջին պայմանը ացետիլենի գործարանից ստացվող գազի վորակն է։ Գործադրվող ացետիլենը 2-3 տոկոսից ավելի կողմանակի խառնուրդներ չպիտի պարունակի։ Այդ ստուգելու համար վերցնում են պղնձի արջասպի, ամմոնիումի և հիդրոկսիլամին քլորիդրատի լուծույթ, վորը շատ լավ կլանում է ացետիլեն։ Որինակ, վերցնենք 100 խորանարդ սանտիմետր տեխնիքական ացետիլենի գազային խառնուրդ և անցկացնենք նրան պղնձի արջասպի լուծույթի միջով։ Խառնուրդի մեջ յեղած ացետիլենը կլուծվի, իսկ վոչ ացետիլենային մասը կմնա։ Յենթադրենք, վոր վերցրած 100 խորանարդ սանտիմետր գազից  $97,5^{0}/_{0}$ -ը կլանվեց։ Հետեւբար տեխնիքական ացետիլենը 97,5 տոկոսային և արտադրության համար պիտանի։ Ապարատները հերմետիկ չլինելու դեպքում, կողմանակի գազերի քանակը կարող է աճել դրա հետեւլանքով նաև կատալիզատորը կոքսիդանա և ացետիլենից կատացվեն կողմանակի նյութեր, և ապա, գազի մեջ ացետիլենի քանակը պակասելու պատճառով, կպակասի նաև ստացվելիք մոնովինիլացետիլենի քանակը։

Այսուհետև պետք է հսկել նաև ոետակորների միջով հոսող ացետիլենի քանակին, վորն անըդհատ պ'տք և չափել և պահել մի վորոշ կետի վրա, մոնովինիլացետիլենի լավագույն յելքը և հետագա, աբսորբցիոն բաժնի արդյունավետ աշխատանքն ապահովելու համար։

Շատ կարեվոր նշանակություն ունի կատալիզատորի բաղադրության պարբերական ստուգումը, վորովհետև աշխատանքի ընթացքում կատալիզատորի մեջ գտնվող այս կամ այն նյութերի հարաբերությունը կարող է փոխվել և խանգարել ոետակա յի հիշտ ընթացքը։ Կպակասի ացետիլենի ոգտագործումը, այսինքն կատալիզատորի միջով հոսող ացետիլենի փոքր քանակությամբ մվա կստացվի, հետեւբար կիշնի նաև ոետակորների արտադրողականությունը։ Բայց յեթե մենք անալիզի յենք յենթարկում կատալիզատորը, ժամանակին իմանում ենք, թե արդյոք փոխվել

և բաղադրությունը և ինչպէս ե փոխվել ու ի՞նչ ե պետք, անհրաժեշտ հարաբերությունները պահպանելու համար:

Անընդհատ պիտք ե հետեւել նույնպես ացետիլենի ոգտագործման ջերմաստիճանին, վորը վերջին հաշվով ամենակարևոր ցուցանիշն ե, ուսակտորների աշխատանքի համար: Ոգտագործման աստիճանը պայմանավորվում ե այս բոլոր արտադրական մոմենտներով, վորոնք մի փոքր առաջ թիվցինք, այս ե՝ ացետիլենի տոկոսը տեխնիքական ացետիլենի մեջ, ուսակտորների միջով հոսող գազի արագությունը, կատալիզատորի բաղադրության փոփոխությունը, ջերմաստիճանը: Դրանցից ամեն մեկն առանձին-առանձին վերցրած, կամ միասին, կարող են ազդել ոգտագործման տոկոսի վրա, վորը պիտի մնա վորոշ ողակիմալ սահմաններում: Այդ ստուգելու համար, վերցնում են ուսակտորներից դուրս յեկող գազերի վորոշ քանակություն, որինակ 100 խորանարդ սանտիմետր, և անց կացնում նոսրացրած ծծմբական թթվի միջով: Այդ գեպքում միան և դվառ կլանվում են, իսկ ացետիլենը մնում է գրեթե բոլորովին չլուծված: Զափելով այդ չլուծված ացետիլենը և հանելով 100 լր. ս. սկզբնական ծավալից, վորոշում են կլանվածի ծավալը: Ասենք թե նախքան կլանիչն ուսնեցել ենք 100 լր. ս. գազային խառնուրդը Յենթագրենք, վոր ծծմբական թթվի միջով անցկացնելուց հետո մնացել է 89,2 լր. ս. չկանված ացետիլեն, տարբերությունը հասասար ե 10,8 լր. ս., հետեւ վրա ոգտագործման տոկոսը կազմում ե 10,8: Մենք այստեղ կանգ չենք առնի մվաշի և դվառ տոկոսային հարաբերությունները վորոշելու ձևերի վրա, վորովհետև նրանք բարդ են և անմիջականորեն ալվարատների վրա աշխատողների համար վոչ այնքան կարենքու: Սակայն վերջիններս միշտ պետք ե իրազեկ լինեն այդ մասին, դրա համար խոշոր նշանակություն ունի ուսակտորի միջով հոսող գազի արագությունը: Ոգտագործված ացետիլենը լրացվում է գազգույրի մեջ յեղած պահեստի գազով:

Յեվ վերջապես աչալության առարկա պիտի լինի արտորեցիոն սկրուբերներից ուսակտորների բաժինը վերադրձող մնացած ացետիլենի անալիզը: Մենք տեսանք, թե ինչպես սառը լուծույթի ոգնությամբ սկրուբերների մեջ դվառ և միան կլանվում և անջատվում են ացետիլենից: Յեթե արսորեցիոն բաժինը լավ չի աշխատում, այն ժամանակ հետ դարձող գազի մեջ մնում է թույլատրված չափից ավելի քանակությամբ մվաշ, վորը շատ անցանկալի յերեխոյցի ե, քանի վոր, նախ՝ լրիվ չի կլանվում արտադրության համար ամենակարենքոր նյութը և յերկրորդ՝ մվառն, վորութաղունալով ուսակտորների մեջ և կրկին անգամ յենթարկվելով կատալիզատորի ազդեցությանը, պոլիմերանում ե, խեժանում և դժվարացնում ուսակտորների աշխատանքը:

Հետ գարձող գազի անալիզը կարելոր և մի ուրիշ տեսակեալց ևս Ացետիլենի կրկին ու կրկին անգամ շրջանառության ժամանակ—ուսակտոր-

ներից գեպի աբսորբցիոն սկրուբբերները, և վերջիններից նորից գեպի ուսակտորները, գնալով աճում ե կողմնակի գազերի քանակությունն ու ընկնում ացետիլենի ծավալային պարունակությունը շրջանառություն կատարող գազի մեջ: Դրա հետ մեկտեղ ընկնում ե նաև արտադրված մոնո և գիվինից լաւագությունից գալու այլ աշխատանքներից գալու այլ աշխատանքների մեջ այլ հավաքել հատուկ կուտակիչներում և ուրիշ նպատակների համար գործածել: Պետք ե լավ իմանալ ու ճիշտ վորոշել այդ ժամանակ միան անալիզ կատարելուց հետո: Դրա համար վերցնում են սկրուբբերներից վորոշ ծավալի գազ, որինակ 100 խորանարդ սանտիմետր և վորոշում վերեկում նկարագրված յեղանակով նրա միջի ացետիլենի ծավալը:

Վորքան ել պլոցեսը լավ կատարվի, այնուամենայնիվ ուսակտորների մեջ մի քանի ժամանակից հետո վորոշ քանակությամբ խեժ և կուտակվում, և կարիք ե լինում կատալիզատորը դատարկել ու հեռացնել խեժը: Այսուհետեւ դատարկված կատալիզատորը նորից լցնում են ուսակտորների մեջ ու շարունակում աշխատանքը նկարագրած յեղանակով:

Արսորեցիոն բաժնի աշխատանքը սերտորեն կապված է ուսակտորների բաժնի աշխատանքի հետ և կազմում է վերջինիս շարունակությունը: Վորքան ել լավ գործեն ուսակտորները, վորքան ել աշալուրջ լինի հսկողությունը կատալիզի ժամանակ, այնուամենայնիվ հնարավոր չե ցանկացած արդյունքն ստանալ, յեթե սկրուբբերները վատ են աշխատում, վորտեղին ինչպես տեսանք, կլանվում են ստացված մոնո և գիվինի լացետի լինի հսկողությունը: Անընդհատ պետք ե հետեւել շրջանառություն կատարող լուծույթի ջերմաստիճանին սկրուբբերների մեջ և վերին ու ստորին ընդունարաններում պետք ե վորոշել մվաշի և դվառ քանակը և համաձայնեցնել ցրտության բաժնի աշխատանքը ուսակտորների բաժնի աշխատանքների, իսկ շրջանառություն կատարող լուծիչի քանակը, սկրուբբերների մեջ մանող կատալիզի գազերի խառնուրդի քանակի և բաղադրության հետ: Յեթե այդ գազերի քանակությունը և մվաշի պարունակումը մեծ ե, անհրաժեշտ ե ուժեղացնել լուծիչի շրջանառությունը և ընդհակառակը: Պետք հսկել վորպեսզի սկրուբբերներից դուրս հոսող լուծիչի մեջ մվաշի քանակը վորոշ չափի լինի, այլ կերպ կարող ե չափից դուրս կլանվելու գեպքում մվառն լուծածվել և այդպիսով մենք կոժվարացնենք առաջին բաժնի աշխատանքը, իսկ պետք յեղած չափին չհանելու գեպքում զուր ուեղը լուծիչի ավելորդ քանակություն կծախսենք, դժվարացնելով հետեւյալ գեղորեցիոն և ցրտության բաժինների աշխատանքը: Այդ վրությունից

խուսափելու համար պիտի կատարել «հագեցած» լուծիչի անալիզը, թորեւրվ կլանված մվան և դվան ու վորոշելով նրանց քանակությունը:

## Գ Ե Զ Ո Ր Բ Ց Ի Ա

Ինչպես տեսանք, կատալիզի ոգնությամբ մենք պահում ենք ացետիւնից ստացված դվան և մվան: Վերջինս ամբողջությամբ կուտակվում է լուծիչի մեջ և այժմ անհրաժեշտ և անջատել նրան լուծիչից և ունենալ մաքուր վիճակում, այսինքն առանց կողմնակի նյութերի հետ խառնված լինելու: Այդ աշխատանքը կատարում ե զեղորրցիոն բաժինը:

Այս բաժնի աշխատանքը պարզ պատկերացնելու համար անհրաժեշտ ե կանգ առնել հեղուկների յեռման կետի հիման վրա իրարից բաժանելու, թորման—պրոցեսի վրա, վորը շատ հաճախ կիրառվում ե արդյունաբերության տարբեր ճյուղերում:

Բոլոր հեղուկները միևնույն ջերմաստիճանի ժամանակ չեն յեռում: Որինակ, վերցնենք «սովորեն» ի արտադրության ընթացքում ստացվող կամ գործածվող հեղուկները:

Սկզբունքների մեջ գործադրվող լուծիչը յեռում ե մոտ +130 աստիճանի ժամանակ


Դիվինիլացետիլենը (մաքուր)	• . . . . . . + 80 աստ.
Եռուովինիլացետիլենը	• . . . . . . + 5 "
Քրոռոպրենը (մաքուր)	• . . . . . . + 58 "

Յեթե ցածր աստիճանի ժամանակ յեռացող հեղուկը—որինակ մոնովինիլացետիլենը—լուծվում ե բարձր աստիճանի յեռացող հեղուկի (լուծիչի) մեջ, այն ժամանակ իառնուրդի յեռման կետը կլինի ավելի բարձր, քան առաջինինը և ցածր, քան յերկրորդինը: Ուրեմն, այդ իառնուրդից մոնովինիլացետիլենն անջատելու համար մենք ստիպված ենք խառնուրդը տաքացնել մոնովինիլացետիլենի յեռման կետից շատ ավելի բարձր—մինչև 45—50 աստիճան: Այդ պայմաններում միայն լուծված մոնովինիլացետիլենը գրեթե ամբողջովին գոլորշիանալով, հեռանում ե լուծիչի միջից—թորվում ե: Սակայն, ստացված մոնովինիլացետիլենը մաքուր լինել չի կարող, քանի վոր 45—50 աստիճան տաքացրած լուծիչի գոլորշիների վորոշ քանակություն խառնվում են մվան հետ: Այժմ, յեթե մենք հեղուկացնենք ստացված գոլորշիները, կստացվի մի նոր խառնուրդ, վորտեղ գերակշռող մասը կկազմի այժմ մոնովինիլացետիլենը, իսկ վորքը մասը՝ լուծիչը: Յեթե մետադամ ես այդ հեղուկը տաքացնենք, արդեն խառնուրդը կսկսի յեռալ ավելի ցածր աստիճանի ժամանակ տալով զրեթե մաքուր մոնովինիլացետիլեն, վորվիետե թորվող մոնովինիլացետիլենին խառնված կլինեն լուծիչի գոլորշու հետքեր միայն:

Նույն ձեզով ե կատարվում վորեն ուրիշ զույգ հեղուկների խառնուրդի

տարալուծումը: Պարզ ե, վոր վորքան մեծ լինի բաժանելու յենթակա խառնուրդի բաղադրիչ սասերի յեռման կհաերի տարբերությունը, այնքան ազելի գժվար կլինի նրանց թորման միջոցով միմիանցից անջատելը: Դորեն ել ավելի յերազանում, յեթե խառնուրդը կազմված ե լինում 3 կամ ավելի բաղադրիչ մասերից: Այստեղ թորման գործողությունը կարիք ե լինում կրկնել միքանի անդամ:

Արտադրության մեջ այդ նողատակի համար գործ են ածվում ռեկտիֆիկացիոն—բազմակի թորման—սյուներ, վորոնք կցված են լինում թորվելք խառնուրդով լցված կաթուային:



Գծագիր № 12

Նկարում ցույց ե տված կաթուան, ռեկտիֆիկացիոն սյունը, վորի լայնության կտրվածքով դրված են միքանի սկավառակներ: Սյան միջից

գոլորշիներն անցնում են կոնդենսատորի մեջ և սառչելով, հեղուկանում: Սառը հեղուկի մի մասը վերապառնում է թորման սյան միջի վերին սկավառակը, իսկ մյուս մասը խողովակով դուրս և տարվում արդեն փորպես պատրաստ մոնովինիլացետիլեն: Վերին սկավառակը վերադարձած մոնովինիլացիլենի շնորհիվ, սյան այդ մասում պահպանվում է ցածր ջերմաստիճան, (5 աստիճ.), մինչդեռ կաթսայում ջերմաստիճանն այնքան բարձ ե, վոր լուծված մոնովինիլացետիլենը կարող և թորվել, իր հետ տանելով լուծիչի գոլորշիները: Հասնելով առաջին սկավառակին, այդ գոլորշիները հանդիպում են յերկրորդ սկավառակից ցած իջնող սառը հեղուկին, իրենք ել են սառչում և խտանում: Պարզ ե, վոր ավելի մեծ չափով կիտանան դժվար յեռացող լուծիչի գոլորշիները, իսկ ինչ վերաբերում է մոնովինիլացետիլենին, ապա նա կհեղուկանա շատ ավելի փոքր քանակությամբ: Ի հաշիվ հեղուկացած մասի տաքության, յերկրորդ սկավառակից իջնող հեղուկը կգոլորշիանա և հորդանալով առաջին սկավառակի վրա չխտացած մոնովինիլացետիլենի գոլորշիներով, կվերադառնա յերկրորդ սկավառակը, վորտեղ կհանդիպի 3-րդ սկավառակից ցած իջնող ավելի սառը հեղուկին:

Այստեղ 2-րդ և 3-րդ սկավառակի վրա կկրկնվի նույնը, ինչ վոր մենք ասացինք 1-ին և 2-րդ սկավառակների մասին, և այդպես շարունակ, մինչեվ վոր 4-րդ սկավառակից գոլորշիանալով, կհեռանա սյունից մաքուր մոնովինիլացետիլենը: Քանի սկավառակ վոր մենք ունենանք սյան մեջ, այնքան անգամ ել վիատորեն կկրկնվի թորման պրոցեսը: Վորքան մոտ լինեն բաժանվելիք հեղուկների յեռման կետերը և վորքան շատ նրանց տեսակները խառնուրդի մեջ, այքան շատ անգամ պիտի կրկնել թորումը, այնքան ավելի շատ սկավառակներ պետք ե ունենա թորիչ սույնը և ընդհակառակը: Շատ ավելի դժվար ե հեռացնել մոնովինիլացետիլենը թորելուց հետո լուծիչի մեջ մնացած դիվինիլացետիլենը: Այստեղ կարիք ե զգացվում հեղուկների խառնուրդը ավելի ուժեղացնել, աչքի առաջ ունենալով, վոր դիվինիլացետիլենը քիմիապես շատ հեշտ փոխվող նյութ ե: Պարզ ե, վոր լուծիչի մեջ, գնալով, կկուտակվեն խեժացած նյութեր ուստի լուծիչն անհրաժեշտ և պարբերաբար, թորելու միջոցով գտել:

Դեղորբցիոն բաժնում պետք ե լավ իմանան, թե ինչ բաղադրություն պարունակող խառնուրդ ե յենթակա թորման, նաև գիտենան, թե վորքան լրիվ ե կատարվել մոնովինիլի հեռացումը լուծիչի միջից:

Այդ նպատակի համար վերցնում են 300—350 խորանարդ սանտիմետր սկրուբերների բաժնից ընդունված «հագեցած» լուծիչ, և լցնելով կլոր հատակ ունեցող կոլբայի մեջ, յենթարկում են թորման, մինչեվ 60° ջերմության ներքո: Թորված մոնովինիլացետիլենը, սառեցնելով, նորից

լցնում են կշռված անոթների մեջ: Կշռելով կլորհատակ ունեցող կոլբան փորձից առաջ և հետո, վորոշում են թորված մոնովինիլացետիլենի քանակը վորը յերկրորդ անգամ ստուգում են կշռված անոթների մեջ կուտակված մվան կրկին կշռելու միջոցով:

Ցեղ վերջապես, անհրաժեշտ և լինում նաև վորոշել լուծիչի կեղտության աստիճանը և ժամանակին մաքրել այդպիսին աշխատանքի պրոցեսում կուտակված կեղտից: Վորոշումը կատարվում է շատ պարզ յեղանակով: Վերցնում են մոտ 10 գրամ գործածված լուծիչ (վակուումից), և թորում նույն կոլբայի մեջ, վորպեսզի լուծիչը հեշտությամբ և լրիվ հեռանա, մինչդեռ խեժացած նյութերն ամրողցվին մնում են կոլբայի մեջ: Կշռելով կոլբան դատարկ և ապա թորումը վերջացնելուց հետո, տարբերությունից ստանում են խեժացած նյութերի քանակը լուծիչի մեջ: Այստեղից կարելի յի հաշվել և տոկոսային պարունակումը:

Ասածի հիման վրա պարզ ե, թե ինչպես պետք ե իրագործել արտադրական հակողությունը դեղորբցիոն բաժնում:


Ամենակարենոր նյութն այստեղ մոնովինիլացետիլենն է, վորը պետք ե ստացվի 97—99 տոկոսային, այսինքն կողմանակի նյութերի պարունակումը մվայի մեջ չպահպան և անցնի 1—3 տոկոսից: Վորոշելու համար, թե կումը մվայի մեջ չպահպան և անցնի 1—3 տոկոսից: Վորոշելու համապատասխանում է այդ ինչ չափով ստացված արտադրանքը համապատասխանում է ավելացայիմաներին, վերցնում են մվայի կշռված քանակություն և ավելացնում նրան ազոտաթթույթի, արծաթի և ալկոհոլի լուծույթի: Մոնովինիլացետիլենը միանում է արծաթի հետ, իսկ լուծույթի մեջ մնում է համապատասխան քանակությամբ ազոտական թթու, վորը և վորոշում են աիտրելու միջոցով:

Պետք ե լավ հիշել, վոր թորումից հետո դիվինիլացետիլենին մոնովինիլացետիլենի սպառնված չպիտի լինի, այլ կերպ հետագայում այդ գվայից շատ դժվար խառնված պիտի լինի, այլ կերպ հետագայում այդ գվայից շատ դժվար կլինի ազատվել և վերջապես, դիվինիլացետիլենը մնալով քլորոպրենի մեջ, պատրաստ սովորենի վրա վնասակար ազդեցություն կգործի:

## ՔԼՈՐՃՐԱԾՆԻ ՍՏԱՑՈՒՄԸ

Քլորճրածինը սովորեն պատրաստելու համար անհրաժեշտ մի նյութ է: Քլորճրածին ստացվում է տարբեր յեղանակներով: Որինակ՝ վերցնում են սովորական սեղանի աղը և վրան ազդում ծծմբական թթվով: Սակայն մեր պայմաններում այդ ձեզի կիրառումն աննպատակահարմար է, վորովինեավ կառուչությունը կծանրաբեռնվեր մի նոր, կողմանակի նյութով կառուչությունը սուլֆատով, վորից ազատվելը կապված է վերադիր ծախքերի հետ: Մինչդեռ աղի ելքաբուլիզը ավելի կրծատ ճանապարհով և ավելի հեշտ հասցնում ե նույն նպատակին: Սակայն, ելքաբուլիզը մի անգամից

աղաթթու չի տալիս: Նախորոք ստացվում են քլորը և ջրածինը իրարից անջատ և անհրաժեշտ ել լինում նրանց միացնելու այլելով քլորը ջրածնի միջավայրում հատուկ այրոցների միջոցով, վորը հիշեցնում է ացետիլենի թթվածնի մեջ այրելն ավտոգեն գործան ժամանակ: Ստորեւ բերվում է ջրածինը քլորի հետ միացնելու այրոցի սխեման:



Գծագր N 13

Մի անցքից մտնում է ջրածինը, իսկ մյուսից՝ քլորը, վորոնք խառնվելով այրոցի ծայրին, անմիջապես միանում են, առաջով գազային քլորջրածին և առաջացնելով մեծ քանակությամբ ջերմություն:

Սխալ կլիներ նախորոք խառնել իրար հետ քլորն ու ջրածինը և ուղղակի այրել պատրաստի խառնուրդը, վորովհետև այդպիսի խառնուրդը ուժգնությամբ կպայթեր, մինչդեռ այրոցի ծայրին գազերը խառնվում են համաչափ և փոքր քանակություններով ու միանում հանդարտորեն և միանգամայն անվտանգ: Ստացվող տաք քլորջրածինը դուրս է ծծվում վառարանի միջից և անց կացվում գրանիտե աշտարակի մեջ, վերջինիս ստորև մասում գտնվող անցքով: Աշտարակի վերեվից անձրեցում է ջուրը, վորը թափվելով աշտարակի մեջ գտնվող թթվակայուն լիցքի վրա, հոսում է դեպի ցած, քլորջրածին հոսանքին հակառակ ուղղությամբ:

Քլորջրածինը լուծվում է ջրի մեջ և պատրաստի լուծութը դուրս է հոսում աշտարակից հատուկ անցքի միջով: Այդպիսով ստացվում է միացող աղաթթու, վորը քլորջրածնի 37 տոկոսային ջրային լուծույթն է:

Այս լուծույթն անմիջականորեն գործ է ածվում քլորովրեն ստանալու համար:

Աղաթթվի մեջ քլորջրածնի տոկոսը վորոշելու համար գործադրվում են հատուկ արենմետրներ, վորոնք աղաթթվի մեջ ընկղմելուց ցույց են տալիս քլորջրածնի տոկոսային պարունակումը:

Քլորջրածինն անգույն, հեղձուձիչ, հետեւթար և թունավոր մի գազ է, վորովիսին ներշնչելուց պետք է խուսափել:

## ՔԼՈՐՋՐԱԾԻՆԻ ՍՏԱՑՈՒՄԸ

Քլորովրեն ստանալու համար ինչպես հայտնի յեւ, անհրաժեշտ ե մոնովինիլացետիլենը քիմիապես միացնել քլորջրածնի հետ:



Մոնովինիլացետիլեն Քլորաջրածին Քլորոպրեն

### Գծագր N 14

Այս ռեակցիան իրագործելու համար բավական չե միայն աղաթթուն ու մոնովինիլացետիլենը միմյանց խառնելը, պետք է նրանց վրա միեվնույն ժամանակ աղղել կատալիզատորով, վորը պատրաստելու համար դարձյալ վերցնում են կիսաքլոր պղինձը և ամմոնիում—քլորիդը: Որինակ ամերիկացիք, վորոնք այս ռեակցիան կատարողներից առաջինն են յեղել, տալիս են կատալիզատորի հետեւյալ բաղադրությունը՝

1. Մոնովինիլացետիլեն 20 գր.
2. Աղաթթու 70 գր.
3. Կիսաքլոր պղինձ 6 գր.
4. Ամմոնիում քլորիդ 4 գր.

Եերբ այս խառնուրդը հաստ պատեր ունեցող շնի մեջ 2 ժամ թափահարում են, մոնովինիլացետիլենի մեծ մասը, աղաթթվի մեջ յեղած քլորջրածնի հետ միանալով, գտնում է քլորոպրեն:

Վորքան ել պարզ լինի այս ռեակցիան և հեշտ իրագործելի լաբորատորական պայմաններում, այնուամենայնիվ արտադրության մեջ աշքի առաջ պետք է ունենալ մի շարք այլ հանգամանքներ, վորովհետեւ այդտեղ ետիանը քլորոպրեն ստանալը չե միայն, անհրաժեշտ ե միեվնույն ժամանակ գործադրվող նյութերը ըստ հնարավորության լրիվությունը մշակված են քլորոպրեն ստանալու 2 ձեվակերպելի հինը՝ ընդհատ, և նորագույնը՝ անընդհատ յեղանակը: Նպատակ ունենալով պարզել տեխնոլոգիայի մրայն քիմիական կողմը, կանգ կառանքներ աղելի պարզ սխեմայով կատարվող ընդհատ պրոցեսի վրա, վորի

ժամանակ աշխատանքը տարվում ե խառնիչ ունեցող ավտոկլավի մեջ: Ավտոկլավը սարքված ե լինում թթվակայուն նյութից և տեղափորված սպակնող շապիկի մեջ: Արտադրական պրոցեսը սկսվում ե հետեւյալ կերպ:

Նախորոք լավ սառեցրած ավտոկլավի մեջ լցնում են սառած մոռնովինիլացետիլեն: Պիտի լավ հսկել սառեցնելուն հիշելով, վոր մոնովինիլացետիլենը յեռում ե +5° ժամանակ և ջերմական ուժիմն անտեսելու գեպքում այդ թանկագին նյութը բոլորովին ապարդյուն կկորչի: Մոռնովինիլացետիլենից հետո ավտոկլավի մեջ լցնում են կատալիտիք խառնուրդը—կիսաքրոր պղնձի, ամմոնիում քլորիդի և խիտ աղաթթվի լուծույթը: Կատալիզատորը լցնելուց անմիջապես, սկսվում ե քլորոպրեն գոյանալու ռեակցիան, վորի ժամանակ մեծ քանակությամբ ջերմություն ե արտադրվում և խառնուրդը տաքանում ե: Խառնիչի անընդհատ աշխատանքի և սառեցնելու միջոցով ապահովում են թե միացվող նյութերի հարատես փոխազդեցությունը, և թե պահպանում ռեակցիայի ջերմական պայմանները:

Աշխատանքի այս ձեվն ընտրում են, նկատի առնելով, վոր քլոր-ջրածինը վինիլացենտիլենի վրա աղորմ ե տարբեր ձեվերով, տարով քլորոպրենի հետ մեկտեղ և այնպիսի միացումներ, վորոնք առաջ են յեկել քլորջրածինը տարբեր ձեվով վինիլացետիլենին միանալուց և կամ վերջինիս յերկու հյուեկն քլորջրածնին միանալուց:

Վերջին յերկու նյութերն արտադրության համար միանգամայն անպետք են: Նրանք գոյանում են ռեակցիան բարձր ջերմական պայմաններում կատարելու ժամանակ և վորքան բարձր ե ջերմաստիճանը, այնքան նրանց քանակն ավելի յե լինում: Թեպետ այդ նյութերն առաջանալուց խուսափելն անհնար ե, այդ ռեակցիան ճշտությամբ մշակված պայմաններում կատարելիս հաջողվում ե նրանց գոյացումը պահպանել 4—8 տոկոսի սահմաններում:

Միաժամանակ, վորքան ել հոգատարությամբ կատարվի վինիլացետիլենի քլորջրածնին միանալու պրոցեսը, այնուամենայնիվ վինիլացետիլենի մի վորոշ քանակություն մնում ե ռեակցիայից դուրս: Անփոփոխ մացած վինիլացետիլենի քանակը կարող ե կազմել 3—6 տոկոս:

Այս բոլորից գալիս ենք հետեւյալ յեղակացության: Թեպետ մոնովինիլացետիլենի և քլորջրածնի միացումից գլխավորապես քլորոպրեն և ստացվում, սակայն դրա հետ միասին հում քլորոպրենը պարունակում ե իր մեջ մի շարք խառնուրդներ, մասամբ ռեակցիան չկատարվելու և մասմբ այլ ուղղություն ընդունելու պատճառով: Արտադրության համար թե մեկը և թե մյուսն անցանկալի, բայց միևնույն ժամանակ անխուսափելի յերեսութեր են և այդ բնագավառում աշխատողները պիտի

արտադրական պրոցեսն այնպես տանեն, վորպեսզի կողմանակի նյութերի քանակությունը տեխնոլոգիական պրոցեսում ընդունված սահմաններից չանցնի, այսինքն պետք ե անընդհատ հետեւյել ռեակցիայի ջերմաստիճանին և ստուգել պրոցեսի նորմալ ընթացքը: Ստուգման սկզբունքներին մենք կծանոթանանք մի փոքր հետո:

Ստացված հում քլորոպրենն անհրաժեշտ ե մաքրել կողմանակի խառնուրդներից: Այդ նպատակով նյութը յենթարկում են թորման վակուումի մեջ, այսինքն ավելի փոքր ճնշման տակ: Ի՞նչու յե կիրառվում աշխատանքի այս ձեվը: Հեղուկներն այնքան ավելի ուշ են յեռում, վորքան մեծ ե նրանց վրա գործադրությունը ճնշումը: Որինակ, շոգեկաթսայի մեջ ջուրը տաքացնում են մինչև 150 և ավելի աստծան, մինչդեռ բաց անոթում, այսինքն սովորական մթնոլորդային ճնշման տակ, ջուրը 100 աստիճանից ավել չի կարելի տաքացնել, հակառակ դեպքում նա ամբողջովին կգորշիանա: Իսկ յեթե ջուրը լցնել բոլորովին փակ անոթի մեջ և սկսել դուրս քաշել ողը, փորքացնելով ջրի վրա յեղած ճնշումը, սկսել դուրս քաշել ողը, փորքացնելով ջրի վրա յեղած ճնշումը, այդ գեպքում ջուրը կսկսի յեռալ ավելի ցածր աստիճանի ժամանակ և այդ աստիճանը կլինի այնքան ցածր, վորքան փոքր ե մթնոլորդային ճնշումն, որինակ 90, 80, 70 և այլն: Նույնը վերաբերում ե և քլորոպրենին, վորը սովորական պայմաններում յեռում ե + 58 աստիճանի ժամանակ, իսկ նոսր մթնոլորդում (վակուումի մեջ) նրա յեռման կետը կարելի յե իջեցնել մինչև 30 աստիճան:

Աշխատանքի այս ձեվը, բացի ընդհանուր նշանակությունից, վորը հնարավորություն ե տալիս ավելի լրիվ կատարել նյութերի զտումը, մասնավորապես մեզ հետաքրքրող արտադրական պրոցեսի համար կարեվոր մի պայման և դառնում, յեթե աչքի առաջ ունենալով քլորոպրենի հեշտությամբ պոլիմերանալու ընդունակությունը, վորն առաջանում ե ջերմաստիճանի բարձրացման հետ մեկտեղ: Յեթե մենք թորելու լինենք քլորոպրենը + 58 աստիճանի ժամանակ, նյութի զգալի մասը, ժամանակից շուտ պոլիմերանալով, կողմանակի խառնուրդների լուծույթում, արտադրության համար միանգամայն զուր կկորչի: Այդ կորուստը սահմանափակելու տեսակետից վակուումի գործադրությունը շատ մեծ դեր է խաղում:

Վակուում թորումից հետո մենք ստանում ենք քլորոպրեն ըեկախիքիատ, վորի զտվածության աստիճանը պետք ե անպայմանուրեն փեկատ, վորի զտվածության աստիճանը պետք ե անպայմանուրեն փեկատ, միևնույն պայմանուրեն պարունակությունը ապահովելու և թե լավ վորակի կառուզով ստանալու համար:

Քլորոպրեն ըեկախիքիատի մեջ կարող են լինել նույն խառնուրդները, ինչ վոր հում քլորոպրենի մեջ, սակայն ինարկե, շատ ավելի քիչ քանակությամբ: Այդ կողմանակի նյութերի պարունակությունը վորոշվում է հետեւյալ կերպ:

Մաքուր քլորոպղենն անգույն, դյուրաշարժ, չեղոք ուեակցիայի, յուրահատուկ հոտ ունեցող մի հեղուկ ե, վրբին կարող են խառնված լինել վինիլացետիլենի և գիքլորիդների միայն չափազանց աննշան քանակություններ:

Թթվուտների ներկայությունը քլորոպղենում վորոշում են ՄԵԹԻ ՔՈՒ ինդիկատորի միջոցով, վորը քլորոպղենի նմուշի մեջ աղաթթու պարունակելու գեղքում, կապույտ գույն և ստանում: Թթվության քանակը վորոշելու համար, քլորոպղենի կշռված նմուշը տիտրում են կծու նատրիւնի գեցինորմալանոց լուծույթով: Մոնովինիլացետիլենի ներկայությունը պարզելու նպատակով պատրաստում են իլուսվեյի լուծույթը, հետեւյալ բաղադրությամբ՝

- 1 գրամ պղնձի նիտրատ կամ 4 գրամ պղնձի սուլֆատ
- 2 խորանարդ սանտիմետր 20 % ային ավշակ (ամիակ)
- 3 գրամ հիդրօքսիլամին քլորիդրատ
- 50 խորանարդ սանտիմետր ջուր:

Ստացվում ե մի անգույն լուծույթ, վորն ացետիլենի շարքին պատկանող վորոշ խումբը միացությունների հետ տալիս և գունավոր, միարժեք պղնձի պարունակող նստվածքներ: Ացետիլեն պարունակող նստվածքը կարմիր ե, իսկ մոնովինիլացետիլեն պարունակողը—բաց դեղին: Հետեւլարար, յեթե թափահարել իլուսվեյի լուծույթին խառնված, կշռած քանակությամբ քլորոպղենի նմուշը, վերջինիս մեջ մոնովինիլացետիլեն լինելու դեպքում անմիջապես կստացվի վերոհիշյալ բաց դեղին նստվածքը, վորը մաքուր ֆիլտրում են և լվանում, լուծում յեռարժեք յերկաթ սուլֆատի մեջ և տիտրում պերմանգանատով: Լուծվելուց առաջացած յերկարժեք յերկաթի ոգնությամբ հաշվում են նմուշի մեջ յեղած մոնովինիլացետիլենը:

Դիքլորիդների չափը պարզում են թորումով: Բացի այս բոլորից, քլորոպղենի մաքրությունը պարզելու համար, հատուկ նմշուշի մեջ, վորոշում են ամբողջ և հիդրօլիզվող քլորը: Սակայն այդ վորոշումները բավական բարդ են և նրանց մասին խոսելը ներկա աշխատության սահմաններից դուրս ե:

Կառուչուկի վերածելու համար, ստացված մաքուր քլորոպղենը պոլիմերացնում են: Քլորոպղենը հեշտությամբ և պոլիմերանում, սակայն այդ պրոցեսը գնում ե տարբեր ձևերով, արտադրության մեջ մի շարք գժվարություններ առաջացնելով: Արտադրության համար կարևոր պոլիմերը՝ ալֆա-պոլիմերն ե (ա պոլիմեր), խմորի նման մի զանգված, վորը հեշտությամբ ձգվում և հունցվում ե:


Յեթե պրոցեսը հաջող ե ընթանում, պոլիմերացման ժամանակ զլխացուցնում ստացվում ե ա պոլիմերը, վորին փոքր քանակությամբ Յ պոլիմեր (բետա պոլիմեր) և խառնված լինում: Վերջինս, լիրկու հյուլե քլորոպղե-

նից գոյացած, անգույն, գարշահոտ և կառուչուկ ստանալու համար անպետք մի հեղուկ ե: Շատ ավելի վտանգավոր և քլորոպղենի յերրորդ՝ Պ պոլիմերը (ոմեգա-պոլիմեր): Դեռ պարզված չե, թե ինչպիսի պայմաններում ե գոյնում, արտադրության համար այդ վոչ միայն անպետք, այլ նույնիսկ և վտանգավոր նյութը, վտանգավոր այն տեսակետից, վոր մի անգամ գոյանալով պոլիմերացվող քլորոպղենի մեջ, նա արագորեն զարգանում ե, տալով սպունգի նման կոշտ, կառուչուկի հատկություններից զուրկ մի զանգված:

Յեզ վերջապես, կա մի չորրորդ՝ Ա պոլիմեր (մյուս պոլիմեր), վորն անմիջականորեն քլորոպղենից չի գոյանում, այլ ստացվում ե ա պոլիմերից: Ա պոլիմերն իսկական «սովորեն» կառուչուկն ե և կարելի յեր յենթագրել, վոր նրա գոյանալը, քլորոպղենի պոլիմերացման ընթացքում նույնիսկ ցանկալի պիտի լիներ: Սակայն կառուչուկ ստանալը բավական չե: Անհրաժեշտ ե, վորպեսզի ստացված կառուչուկից կարելի լինի պատրաստել զանազան առարկաներ և միաժամանակ նրան, բնական հում կառուչուկի նման, իսուն զանազան նյութեր՝ մուր, մետաղակտն ոքսիդներ, ներկեր և այլն:

Ա պոլիմերը վերոհիշյալ մշակումներին չի յենթարկվում, մինչդեռ ա պոլիմերը ընդհակառակը, շատ հեշտությամբ մշակվում ե: Հետեւաբար հում կառուչուկը պետք ե նախորոք ստանալ վորպես ա պոլիմեր, խառնել նրան բոլոր անհրաժեշտ նյութերը, տալ համապատասխան ձեւ և զրանից հետո միայն տաքացնելով, դարձնել ա պոլիմեր: Այստեղից հետեւյալ ե, վոր քլորոպղենի պոլիմերացման ընթացքի շեղումը և պոլիմերից արտադրության համար անցանկար յերեղույթ ե:


Ստորեւի բերված և քլորոպղենից տարբեր պոլիմերների ստացման սխեման:



Գծագիր № 15

Քլորոպղենի պոլիմերացումը կատարվում է պոլիմերի լատուրների մեջ, վորոնք իրենցից ներկայացնում են հերմետիկ կերպով փակված մետաղյա անոթներ: Անոթների կափարիչներին հատուկ խառնիչներ են հարմարեցված, վորոնք պոլիմերացման պրոցեսում ոլովիմերացվող քլորոպղենն անընդհատ խառնում են: Զերմաստիճանը պահպանելու համար պոլիմերի կատար-

Ներին հատուկ շապիկներ են հագցված, վորոնց միջևով անընդհատ շրջանառություն ե կատարում կիսատաք ջուրը:



Գծագիր № 16

նում քլորոպրենը բաժանել սպիրտից, քանի վոր սպիրտը լուծվում ե ջրի մեջ, իսկ քլորոպրենն անլուծելի լինելով, հալվագլում ե սպիրտ—ջրային լուծույթի մակերեսին: Հեռացնելով սպիրտ—ջրային լուծույթը, քլորոպրենը չորացնում են և կրկին յենթարկում պոլիմերացման, իսկ սպիրտ—ջրային լուծույթը թորփում և վեր ե ածվում արտադրության համար անհրաժեշտ 96 տոկոսային ալկոհոլի: Այս յեղանակներից յուրաքանչյուրն ունի առավելություններ՝ ու թերություններ: Վակուումների կիրառման ժամանակ, այդ մեքենաների բարդ լինելու հետ մեկտեղ, տեղի յեւնենում քլորոպրենի մեծ կորուստ: Սակայն այս յեղանակի առավելությունը նրանումն ե, վոր

Պրոցեսը կատարվում ե սովորաբար 25-30 աստիճան ջերմության ներս քո և տեղում ե միքանի որ: Յերբ քլորոպրենի ճնշող մեծամասնությունը վեր ե ածվում ո պոլիմերի, անոթը դատարկում են և քլորոպրենի չպղիմերացված մասը թորելով հեռացնում կամ նստեցնում են և զուռմ վորեկի լուծիւ չով—որինակ սպիրտով: Յեթե կիրառվում ե թորումը, այդ գեպքում պրոցեսը կատարում են վակուումի մեջ, վորպեսզի ստացված նյութը բարձր ջերմաստիճանի չյենթարկվի և հեղուկ քլորոպրենի մնացորդները ամրողապես հեռանան: Ալկոհոլով զտելու ժամանակ, պոլիմերացած քլորոպրենին սպիրտ են ավելացնում, վորի մեջ չպղիմերացված քլորոպրենը լուծվում ե, իսկ պոլիմերացածը վոչ: Այս ձեվն ընդորինակված ե բնական կառուչուկը լաբորատորական պայմաններում մաքրելու յեղանակից, վորի ժամանակի քլորոպրենի պոլիմերացած մասը նըստում ե ամրողովին, իսկ անփոփոխ մնացած քլորոպրենը ամրողապես լուծված մնում ե սպիրտի մեջ: Անջատելով սպիրտը ո պոլիմերից և խառնուրդին ջուր ավելացնելով, հնարավոր ե դառնում քլորոպրենի պոլիմերացած մասը լինելով, հալվագլում ե սպիրտ—ջրային լուծույթի մակերեսին: Հեռացնելով սպիրտ—ջրային լուծույթը, քլորոպրենը չորացնում են և կրկին յենթարկում պոլիմերացման, իսկ սպիրտ—ջրային լուծույթը թորփում և վեր ե ածվում արտադրության համար անհրաժեշտ 96 տոկոսային ալկոհոլի: Այս յեղանակներից յուրաքանչյուրն ունի առավելություններ՝ ու թերություններ: Վակուումների կիրառման ժամանակ, այդ մեքենաների բարդ լինելու հետ մեկտեղ, տեղի յեւնենում քլորոպրենի մեծ կորուստ: Սակայն այս յեղանակի առավելությունը նրանումն ե, վոր

չպղիմերացած քլորոպրենը առանց չորացնելու կարելի յե վերադարձնել արտադրության մեջ:

Յերկրորդ յեղանակը շատ ավելի պարզ ե, անհրաժեշտ սարքավորումը վոչ այնքան բարդ և կորուստները փոքր: Բացասական կողմը, սպիրտի անխուսափելի կորուստն ե, վորը տեղի յե ունենում ամեն անզամ նրան զտելու և կրկին խտացնելու ժամանակ:

Այս կամ այն յեղանակով ստացված քլորոպրենին խառնում են անտեռքսիդանտներ-այսինքն այնպիսի նյութեր, վորոնք կառուչուկը զերծ են պահում ողում յեղած թթվածնի վնասակար ազդեցությունից և թույլ տալիս ո—պոլիմերը ւ—պոլիմերի վերածվելուն: Հետև անտիռքսիդանտ խառնած ո—պոլիմերը գորշ գույնի, պինդ խորոբի հատկությունները ունեցող մի զանգված ե, վորի ստացումը կազմում ե մեր բռնվագատական վատրաստվելու յեն ռետինե ֆարբիկատ ե, վորից հատուկ գործարաններում պատրաստվելու յեն ռետինե զանգվան պարագաներ, սկսած ավտոդածկոցներից մինչև ռետինե խողովակները, գնդակները և այլն:

### ԹԹՈՒ ԿԱՏԱՐԻԶԱՏՈՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Ինչպես արգեն հիշված ե, մոնովինիլացետիլենից քլորոպրեն ստանալու համար գործ ե ածվում 36 տոկոսային աղաթթվի, կիսավլոր պղնձի և ամմոնիում քլորիդի լուծույթ: Քանի վոր աղաթթվի մեջ յեղած քլորջրածնի մի մասը, միանալով մվայի հետ քլորոպրենի յե վերածվում, ուստի աղաթթվի տոկոսային պարունակումը 36-ից իջնում ե 28-30 տոկոսի և նա արտադրության համար դառնում ե անպետք: Սակայն, յեթե այդ լուծույթի միջով քլորջրածնին անցկացնենք, աղաթթվի խտությունը կրկին կրաքրանա և հնարավոր կդառնա այդ վերանորոգված կատալիզատորը վերատին ոգտագործել: Բայց վերանորոգման հնարավորությունները սահմանափակված են, վորովհետև մոնովինիլացետիլենի քլորոպրենացման ժամանակ, բացի մեծամասնություն կազմող քլորոպրենից ստացվում են նաև կողմնակի նյութեր, վորոնք ամեն անգամ, պրոցեսը կրկնելու դեպքում, կուտակվում են կատալիզատորի մեջ և վերջի վերջու խանգարում պրոցեսի նորմալ ընթացքը: Այդպիսի անվերանորոգելի, անպետքացած կատալիտիք խառնուրդը բարդ մշակման կարիք ունի, գլխավորապես նրա մեջ լուծված պղնձը վերստանալու նպատակով: Այդ բարդ մշակումը իրագործվում ե արտադրության մեջ:

### ԴԻՎԻՆԻԼԱՑԵՏԻԼԵՆԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Մոնովինիլացետիլենի հետ մեկտեղ, 10-25 տոկոսի սահմաններում ստացվում են նաև դիվինիլացետիլենի ավելի բարդ պոլիմերներ, վորոնց ողտագործումը, արտադրության համար կարելորագույն խնդիր ե: Դիվինիլացետիլենը անդուրեկան հոտով, անգույն, չհագեցած ածխաջրածնների շարքին պատկանող և +80-83 աստիճանի ժամանակ յեւացող մի հեղուկ ե, վորը կլանելով հեղտությամբ ողի թթվածինը, տալիս

և շփումից, հարվածից և ջերմությունից պայթող պերոքսիդներ։ Այս հատկությունը միշտ աչքի առաջ պետք է ունենալ, խուսափելով դիվինիլացետիենի զգալի քանակություններ պահաժաներում, սկսյակներում և առհասարակ հատկապես նշանակված տեղերից դուրս պահելու ժամանակ։ Լավ փակած և ողի շփումից պաշտպանված դիվինիլացետիենը պայթելու տեսակետից անվանենք ե։

Քլորոպրենի նման, դիվինիլացետիենը նույնպես ընդունակ է ինքնուշը ունի կերպով պոլիմերանալու։ Պոլիմերացած դիվինիլացետիենը ողում հեղտությամբ չորանում է, ծածկվելով փայլուն ու ամուր լաքի թախանթով։ Այդ լաքը, վորոշ բացառությամբ, չի յննթարկվում թթվառտների և լուծիչների ազդեցությանը։ Քանի ջերմաստիճանը բարձրանում է, այնքան ավելի արագանում և պոլիմերացման պրոցեսը Սակայն յիթե պոլիմերացվելու լինի զուտ դիվինիլացետիենը, պրոցեսը կընթանա վոչ միապաղաղ, այսինքն՝ նյութի մի մասը կիրածվի մակարդած, անլուծելի վիճակի, իսկ մյուսը կմնա չպալիմերացած։ Այդ ձևով ստացվող լաքը գործածության համար անպետք է և նույնիսկ վտանգավոր, վարովնետե չպալիմերացած դիվինիլացետիենը, շփելով ողի հետ, կազմում է արգեն վերը հիշված պերոքսիդները և ստացված լաքի թաղանթը դյուրավառ ու բանկվագ և դառնում։ Դրանից խուսափելու համար պոլիմերացումը կատարում են լուծիչների մեջ և փոքր ճնշման ու ջերմաստիճանի ներքու Աշխատանքի այս ձևով համար վորություն և տալիս դիվինիլացետիենի պոլիմերացումը ավելի խորը և մեծ չափով կատարել։ Արտադրության մեջ անհրաժեշտ է անընդհատ հսկել պոլիմերացման պրոցեսին, հակառակ դեպքում կարող է տեղի ունենել ստացվող լաքի գերազանցում, և պոլիմերիզատորի մեջ յեղած ամրող դիվինիլացետիենը կմակարդակի, զառնալով գործածության համար անպետք մի նյութ։ Յեզ, ընդհակառակը, վոչ ընթիվ կատարված պոլիմերացման ժամանակ դիվինիլացետիենի զգալի քանակություն կմնա չուտագործված և այն բոլոր անցանկալի յերեսութների պատճառը կհանդիսանա, վորոնց մասին մի փոքր վերև մանրամասն առված է։

Դիվինիլացետիենից ստացվող լաքի պատրաստ լինելը վարոշում են վիսկոզիմետրի (մածուցիկաչափ) ոգնությամբ, վորը հնարավորությունն և տալիս հետեւվել մշակվող դիվինիլացետիենի մածուցիկության փոփոխվելուն։ Վորքան շատ և պոլիմերանում դիվինիլացետիենը, այնքան ավելի խտանում է։ Սկզբում ջրի նման շարժուն հեղուկը հետզհետե թանձրանում և դժվարահու գառնուում Յերբ թանձրությունը համար մ արտադրության համար անհրաժեշտ չափի, տաքացնելը դադարեցնում են, և վակուումի տակից գոլորշիացնելով հեռացնում են լուծիչն ու դիվինիլացետիենի մնացորդը։ Ողից թթվածին չկլանելու համար, լաքին անտիօքսիդանտ են ավելացնում, վորից հետո միայն լաքը պատրաստ և գործածության համար։ Իրեն անտիօքսիդանտ գործ և ածվում հիդրոքսինոնը։

Պոլիմերացման աստիճանը կարելի յն վորոշել հետեւյալ յեղանակով։ Պոլիմերացած դիվինիլացետիենի նմուշ պարունակող փոքրիկ անոթը կըսում

են անալիտիկ կշեռքով և վերցնելով այդ նմուշից վորոշ քանակություն նախորոք կշռված առարկայական ապակու վրա, անոթը կրկին կշռում են։ Անոթի առաջին և յերկրորդ քաշի տարբերությունը հավասար է առարկայական ապակու վրա լցված լաքի քանակությունը, թողնելով առարկայական ապակին ողում մինչև նրա վրա լցրած նմուշի չորանալը և ապա կշռելով այդպիսին, հանում են լաքով ծածկած ապակու կողմանը մաքուր ապակու կշռելով և ստանում վերցրած նմուշի միջի լաքի առկուսը, վորով և գեղագրակում են, դիվինիլացետիենի պոլիմերացման (լաքի պատրաստ լինելու) աստիճանը վորոշելու համար։

Գործարանում պոլիմերացումը կատարվում է յերկաթյա գլանաձն, խառնիչներ և բավական մեծ տարողություն ունեցող անոթների մեջ։ Անոթները գրախից շապիկներ ունեն ու տաքացվում են 80-90 աստիճան ջերմություն ունեցող ջրով։ Ապարատների կառուցվածքն իր սկզբունքով քլորոսպինի միայն հիշատակությամբ։

Դիվինիլացետիենի հետ մեկտեղ ստացվում է փոքր քանակությամբ նաև վինիլ քլորիդ և ացետալիդների, սակայն այդ նյութերի տուանձնացումը ու մշակումը առանձին արժեք չի ներկայացնում, ուստի կարելի յերագարաբեկ միայն նրանց հիշատակությամբ։

Զեռնարկության անտեսության համար կարելորագույն հարցերից մեկը, արտադրական ավելցուկների ոգտագործումն է, կարբիդի մանրունքը և փոշին, քրորի ազելյուկի, սեակտորներից մերթ ընդ մերթ դուրս թողնվող ողափառն ացետիենը, հանգած կիրը, սրանք բոլորը ստացվելու յեն արտադրության պրոցեսում, բարդացնելու յեն աշխատանքը և ավելացնելու կառուցւկի ինքնարժեքը և ընդհակառակը, կազմակերպելով այդ բոլորի քիմիական մշակումը, կարելի յե վոչ միայն աղատվել ավելորդ ծախքերից, այլ և ստանալ մի շարք պիտանի նյութեր։

Կարբիդի փոշին ստացվում է կարբիդի մանրացման ցեխում։ Մինչեւ վերջին տարիները այդ փոշին չեր ոգտագործվում և մեծ մասմբ կորչում ապարդյուն, համապատասխան գեներատորներ ըլինելու պատճառով, իսկ սովորական գեներատորներն այդ նպատակի համար գործադրելն անհնար ե, վորոնետե կարբիդի մանրունքը ջրի մեջ մեծ արագությամբ և տարալուծվում և զանազան աղետների՝ հրդեհի, պայմանական և այլնի պատճառ գառնում։ Բայց վերջերս կարբիդի փոշին տարալուծելու հատուկ գեներատորներ են կառուցված։ Սակայն փոշուց ստացվող ացետիենը կառուչուկ ստանալու համար անպետք ե, մինչեւ այդ ացետիենը կացելի յե ոգտագործել այլ նպատակների, որինակ ացետիենի քլորացման համար, վորի ընթացքում հնարավոր և զառնուում ողափործել ավելցուկ քլորը։

Քլորն ացետիենի հետ տալիս է մի շարք միացություններ։ Այստեղ կարելի է հիշատակել յերկուսը՝ տիտառաքլորերատը և նրանից ստացվող տրիքլորետիենը։ Միքանի խոսք նրանց ստացման պրոցեսի մասին։

Քլորն ու ացետիլինը քիմիապես միացնելու ժամանակ նրանց անմիշականորեն խառնել չեն կարելի, վորովհետեւ ուեակցիան չափազանց բուռն ընթացք կնդունի: Ուստի պրոցեսը կատարում են լուծիչների մեջ, կատալիզատորների ոգնությամբ, վորոնք մեղմում են ուեակցիան և այդպիսին անվտանգ դարձնում: Վորպես լուծիչ գործ ե ածվում տետրաքլորետանը կամ համապատասխան քլորածխածնային միացում—որինակ քառաքլորածխածինը: Արտադրության մեջ—վորպես կատալիզատորներ—կիրառվում են սուրմաքլորիդը կամ յերկաթքլորիդը: Ացետիլենը քլորի հետ միանալով տալիս ե տետրաքլորետան կամ կրճատ «տետրա», մի անգույն հեղուկ, քլորոֆորմի քաղցրավուն հոտով և հատկություններով, սակայն ավելի սակավ նարկոտիկ ու թունավոր: Նա յեռում ե մոտ +145 աստիճանի ժամանակ և իր մեջ հեշտությամբ լուծում զանազան որդանական նյութեր: Բայց նա արտադրության մեջ իրեն լուծիչ չեն գործածվում, քանի վոր հեշտությամբ անջանաւմ ե քլորջրածինը, վորը մաշում, վչացնում ե մետաղյա սարքավորումը՝ անոթները, խառնիչները, խողովակները և այլն:

Այդ պատճառով ել գերազանցում են գործածել «տետրայից» հեշտությամբ ստացվող տրիքլորետիլենը կամ «տրի»-ն:

Յեթե տետրաքլորետանը տաքացնել, խառնելով նրան տաք կրակաթ, նա իրենից հեշտությամբ մեկ քլորջրածին կանջատի և քանակորեն կվերածվի տրիքլորետիլենի: Այդ պրոցեսը տարրվում է փակ մետաղյա, խառնիչներ ունեցող անոթներում: Յերբ ուեակցիան ավարտվում ե, խառնուրդն անջատելու համար տրիքլորետիլենը թորում են: Ստացված տեխնիքան տրիքլորետիլենը բաց դեղնավուն, նույնպես քլորոֆորմի հոտը և հատկությունները հիշեցնող մի հեղուկ ե, վորն ավելի անվտանգ ե, քան տետրաքլորետանը: Նա յեռում ե +83 աստիճանի ժամանակ և ունենալով տետրաքլորետանի լուծունակությունը, զերծ ե վերջինիս մետաղյա սարքավորումը փչացնելու հատկությունից:

Տրիքլորետիլենն իրենի լուծիչ, մյուս լուծիչների համեմատությամբ, ունի անփոխարինելի առավելություններ, նա չեն այրվում, նրան հրդեհի դեպքում կարելի յե գործադրել կրակը հանգցնելու համար, նրա լուծող հատկությունները բազմազան են և յեռման կետը ցածր: Բացասական կողմն արդեն վերեվում հիշված թունավոր հատկություններն են, սակայն ներկայիս կատարելագործված և հերմետիկ փակված սարքավորման մեջ նա վեր ե ածված անվտանգ մի նյութի:

Ինչ վերաբերում ե կարբիդից ստացվող հանգած կրի ոգտագործմանը, այդ խնդիրը ներկա բրոցյուրի նյութի սահմաններից գուրս ե, վորի նպատակն ե տալ միայն սինտետիկ կառուչուկ ստանալու տեխնոլոգիական պրոցեսի համառոտ նկարագրությունը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0937695

28 МАРТ 1936

397

11

28101

ԳԻԱԸ 1 Ր. 20 Կ.

ДОЦЕНТ С. АРУΤՅՈՆՅԱՆ

СИНТЕТИЧЕСКИЙ КАУЧУК

Издание Бюро ИТС СК—„Совпрен“ им. КИРОВА

ЭРИВАНЬ

1936 г.